


1826

5. 18. 4



1909-10



ԿՐԹՆԱ-ԵԿԵՂ ԵՑԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ա. ՏԱՐԻ

15 ՆՈՅԵՄԲԵՐ 1909

ԹԻԻ 1

ԽՐԲԱԳՐԱԳՆՑ

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

Վ. Ա. ԲԻԶ

ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ՀՈՐ ՈՐՀԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ

ԽՐԲԱԳՐԱԳՆՑ

ԿՐԹՆԵՐ ԵՒ ԻՐ ԳԻՄԱՅԵՂՈՒՄՆԵՐԸ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱԻՏԱՐԱՆԻ

Ս. ԳԳՅ ԲՆԱՊԱՏԱՄՈՒԹԻՒՆԸ

ՀԱՐԵԿԻ ՀՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ ԿԱՄ ԱՐԵԱՆՈՒՆԵԱՅ ԹԱ-

ԳԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐՈՒՐԸ

ՀԱՆՍԻՐԻ ՅՈՒՐԵՐ

«ՏԱՀԱՐ» Ի ԶՈՒՇԱՏԵՏԸ

ԳԱՐԵԳԻՆ Վ. Ա. ԲԱՐԻԱՐԻ

ՄԵԿՆԻԶ

ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

Ծ. ՄԵՐԵԲԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Վ. Ա. ԲԱՐԻԱՐԻ

ԹԱՐԴ. ՏԵՐԱՅԻ Վ. Ա. ԲԱՐԻԱՐԻ

Գ. Վ. Ա. ԲԱՐԻԱՐԻ

ԳԻՆ 50 փութայ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Պոստ Այի հասցեի Աեփեքիլէր փողոց Թիւ 27



ԿՐՕՂԱ-ԵԿԵՂ ԵՅԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ա. ՏԱՐԻ

15 ՆՈՅԵՄԲԵՐ 1909

ԹԻԻ 1

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ՀՕՐ

Տ. Տ. ԵՂԻՇԷ Ս. ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ

Սիրելի Վարդապետ

Գիրովդ կ'աւեսես ինձ նոր կրօնաքերթի մը՝ «Տառար»ի՝ հրատարակութիւնը որուն խմբագրապետութիւնն ստանձնած ես՝ խմբագրական եւ վարչական մարմիններու աշխատակցութեամբ:

Կը շնորհաւորեմ, կարողութիւն մաղթելով եւ կը փափաքիմ որ տեսական ըլլան այդ ձեռնարկի օգուտն ու արդիւնատուրը:

Երբ ընկերային ամէն երեւոյթ իր պատշաճ տեղը կուգայ գրաւել մեր գրական հրապարակին վրայ, կրօնականին ազատ շրջաբերումն ալ հո՛ն՝ իր իրաւունքը պէտք է ունենայ, իբրեւ հնագոյնն ու մարդկայինը այդ երեւոյթներուն:

Եթէ դարաւոր հաստատութեան մը գոյութեամբը պարծող այդ իրականութիւնը կարենար վայելել իր երկրպագուներուն ներկայութիւնը նիւթական տառարներու մէջ՝ ինչպէս էր երբեմն, թերեւս անոնց բնմերը բաւա-

կանանային կասարելով պաշտօնը ա՛յն ձայնին՝ որ կրօնական զգացումները վառ պահելու նախանձախնդրութեամբ կ'երգէ ու կը խօսի. բայց որովհետեւ քիչեր միայն Աստուծոյ սան այցելութենէն հանոյ՜ մը կ'զգան այսօր, ու ան ալ ո՛չ անխառն այս կամ այն դժգոհ տալուորութիւններէն՝ որոնց վրայ աւելորդ է հոս խօսիլ, գրաւոր «Տաճար»ին դերն իր ազդեցութիւնը պիտի ունենայ անուշ՝ որոշ չափով մը՝ մեր ամայացած տաճարներուն սեմէն ներս հրաւիրելու համար ո՛ր եւ է հայ սիւրճ՝ որ գիտէ բարախել աստուածային սրբութեան մը դիմաց, կամ ո՛ր եւ է հայ միսք՝ որ կրնայ խորասուզուիլ այդ շէնքերու հսկայ իմաստին մէջ:

Սակայն կազդուրելու համար մեր բարոյական ճնշման մէջ պահպանուելիք կրօնական ուժը՝ հարկ չէ՝ զինել զայն մաքառումի զայրոյթով: Կրօնը երբեք զինարան մը չէ՝ եղած մեր մէջ՝ սարսափ ազդելու համար անո՛նց որոնք կ'ուզեն կռուիլ իր դէմ, այլ ընդունարան մը անո՛նց համար որոնք աղետալի վտանգներէ կը փախչին:

Մեր եկեղեցին մանաւանդ՝ նախախնամական այդ հոգածութեամբ նուիրականացած՝ տիրացած է ցարդ մեր հոգիներուն, ու շինած է մեր մէջ կեանք մը, առանց թելադրելու որ արհամարհենք այն բարձրութիւնները՝ ուր մարդիկ կրնան հասնիլ իրենց սեպհական ձգտումներով կամ քաղաքակիրթ աշխարհի մերթ յաւել ու մերթ պոյսօր հայեցողութիւններով:

Կրօնաբերքիդ լաւագոյն ուղղութիւնը պէ՛տ է ըլլայ, հաշտ պահել Աստուծոյ խօսքը մեր բարոյականին հետ. վասն զի այդ իմաստասիրութեամբ միայն պիտի կրնանք «ամօք չհամարել Քրիստոսի Աւետարանը»՝ որուն պէ՛տ ունինք յաւիտենապէս:


Մենք այդ Գիրքին ու անկէ ստացուած կենսականութեան շա՛տ բան կը պարտինք: Անով ներարկուած է մեր երակներուն մէջ մարտիրոսութեան այն անսպառ կորովը՝ որ մեծագոյն դրուագն է կազմած մեր հին ու նոր պատմութեան, ու անով կանգուն կը մնան մեր տաճարները՝ որոնց ամէն սպասները սրկուած են մեր արիւնով: Այդ տաճարները նշանակն են մեր կեանքին, ու ապահովութիւնը մեր ապագային:

Այս նահապետ ժողովուրդին ի տես՝ ո՛չ մէկ տրբունք՝ ի՛նչ ամբարիշտ կախարդանքով ալ լեցուած ըլլայ՝ պիտի չհամարձակի դուրս թափել վարձկանի մը նզովքը... այլ Բաղասամի նման՝ անթարգմանելի այլայլումի մը մասնուած՝ աչքերը փակ պիտի մըմնջէ.

«Ի՛նչ գեղեցիկ են Քու Տաճարներդ...»

Ողջունէ՛ւ եւ օրհնութեամբ:

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ



ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ամէն գործ կամ ձեռնարկ իր առաջագրած նպատակը, և այդ նպատակը հետապնդելու և անոր հասնելու համար իր որոշ ուղղութիւնը կ'ունենայ: Առանց այս կանխապատրաստութեան, ոչ մէկ յաջողութիւն և տեսականութիւն կարելի է երաշխաւորել, վասն զի ասի առանց անհրաժեշտ պարէնաւորումի երկար ու տաժանելի ճամբորդութիւն մը կատարելու կամ առանց ռազմամթերքի և զինուորական հրահանգներու վարժութեան, պատերազմի վազելու պիտի նմանէր:

«Տաճար»-ի հրատարակութեան ձեռնարկի լրջութիւնն որ արժէքը իր նպատակին և ուղղութեան մէջ երեւան պիտի գտնուէր, լուսաւորելով և բուժելով այն մտքերը, որոնք գործին յայտնութեանէն առաջ փութկոտ, կանխակալ ու սխալ դատաստաններով կը գայթակղէին՝ տարուելով այն հակահոսանքէն՝ որուն մէջ տեսնուած անբաշխելի և վնասակար ծայրայեղութիւնները մասամբ արդիւնք են նոր, անխոհմօրէն արմատական և ժաժամանակագրական կանխումով մը (anachronisme) մոլորած բռնաշունչ հոսանքի մը՝ որն յիշքան աղէտաբեր է որքան առաջինը և մասամբ ալ ներքին փտութեան մը՝ որ զգուշաւոր վիրահատութեան մը պէտք ունի արդարեւ:

Ժամանակի յեղաշրջումները, երբեմն անակնկալ եղանակով և փո-

թորկումներով կատարուած, ճիշդ է թէ իրենց հետ կը բերեն այս արտակեղրոն փոփոխումներն ու արտուղղութիւնները: Իրաց այս բնական հետեանքին առջև մտաւորական աշխարհը պէտք է ինքնամիտփութիւն խտեսելու և արգիլելու համար՝ կորովի և իմաստուն ձեռներէցութեամբ՝ բոլոր այն պատահականութիւններն ու վտանգները, որոնք կրնան սպառնալ ընկերական կեանքի ներդաշնակութեան խանգարումը, հետեւաբար և քաղաքակրթութեան զարգացումին ընդհատումը:

Օսմանեան՝ բաղդատմամբ շատ խաղաղ՝ յեղափոխութիւնը, ազատելով բազմատարր Օսմանցիութիւնը ահեղօրէն բռնաւոր լուծէ մը՝ որ 32 տարիներ շարունակ անասող երբորդի մէջ խեղդեց ամբողջ Օսմանիայի քաղաքակրթութիւնը, վերածնունդի նոր դարաշրջան մը բացաւ Արեւելքի այս ամենագեղարար հողաբաժինին մէջ: Այս վերածնունդը ընդոստ զարթում մը եղաւ շատերու համար այն խոր քունէն՝ ուր ընկղմած էին տառապեցուցիչ երազներով և միջաւանջներով: Բնական էր ուրեմն այն արտակարգ խանգալաւութիւնն ու գինովութիւնը՝ որոնցմով մտքերը կը ցնցուէին նո՞ր իրականութեան մը և նո՞ր կեանքի մը ազատաշունչ ու խոստումնալից հորիզոնի մը առջև: Դժուար և նոյն իսկ անկարելի էր որ նժարը իր հաւասար

րակչութիւնը պահէր: Բռնապետութեան բարձումը առաջին պատեհութեամբ կարելի չեղաւ հակակշռել Օրէնքի խիստ պահպանութեամբ, ազատութիւնը սանձարձակ գործեց պահ մը՝ հակահարուածի մը աղաւաղ առաջները պատրաստելով՝ լռիկ՝ յետադիմականներու երկար քղանցքներուն և երջողի կամարիլայի հովանաւորութեան ներքէ: Նիւթական ազէտը ահաւոր էր գծաւառ Նիւթիոյ հորիզոնին տակ:

Բայց ինչ որ աւելի մտահոգութիւն կը պատճառէ ողջամիտ խորհողներու՝ այն տխուր երեւոյթն է՝ որ կը պարզուի ժողովուրդներու, և մասնաւորեալով, մեր ժողովուրդի բարոյական կեանքին մէջ: Մանկութեան վտանգը անխուսափելի է, եթէ չկարենանք պահել մեր պաշարիւնութիւնը, լրջութիւնը և շրջապէսայ ու հեռաւեւ խոհականութիւնը, չափել ու կշռելու համար բոլոր շարժումներու արժէքն ու նպատակը աննախապաշար յստակատեսութեամբ մը և գոհացում տալու համար բոլոր այն պէտքերուն և պահանջումներուն՝ զորս ժամանակը կը բերէ մեզ: Այս կամ այն կողմէ դիտումաւոր անհասկացողութիւնները և անխորհուրդ վիճաբորութիւնները փոքրոգի միտքերու յատուկ են, որոնք իրենց ծրագրի յաջողութեան համար կ'արդարացնեն ամէն միջոց, թէ իսկ բանականութիւն և խիղճ համաձայն չգտնուին: Մենք վստահ ենք թէ լրջամիտ դասակարգը, ինչ անուանի տակ որ ալ ըլլայ, համամիտ չէ այդպիսի շարժումի մը: Մեր խօսքերէն կը հասկցուի թէ մեր դիտողութիւնները որոշ և մասնաւոր հասցէի ուղղուած չեն բնաւ: Մեր նպատակն

է մատնանշել վերք մը՝ որ ազդին կողմէ վրայ բացուած է այս կամ այն անհատին, այս կամ այն ընկերութեան, այս կամ այն դասակարգին կողմէ: Մենք հակառակ չենք և համակիր իսկ ենք այն քննադատութեան՝ որ ռամկական և ամբողջաւար խժեթանքէ ու անբարեխիղճ բարութանքէ զերծ, անձնականութիւնները մէկ կողմ թողլով, սկզբունքի անաչառ և ճշմարտախնդիր քննութեամբ կը դրաղի, ընկերական կեանքի բազմակողմանի և առողջ զարգացումին անգնահատելիօրէն սատարելով: Անհոգի տառը կ'սպաննէ և վարկաբեկ կ'ընէ քննադատութիւնը՝ որ մոքին ամէնաւ մեծ ոյժն ու կարողութիւնը, և ճշմարտութեան անխարդախ ստուգանիչն է, իր ուղղափառ ըմբռնումով: Իսկ ահաւոր և անդարմանելի է քննադատութեան պատճառած չարիքը՝ երբ ան կը չեղի իր ուղղութիւնէն: Փննասէրութիւնը չափազիտական (mathématique) միտք և թուադիտական ճշտութիւն կը պահանջէ, առանց որոնց անխուսափելիօրէն սխալ եղբայր կացութիւններու կ'առաջնորդէ մեր բոլոր դատաստանները: Մարդկային գործակցական ընկերութիւնները սկզբունքի մը շուրջ կը խմբուին, կազմելով ծրագրուած ուղղութիւններով ժողովրդային զանազան զանգուածներ (massa): Ժողովրդային կ'ըսենք՝ այն տեսութեամբ որ ո՛չ մէկ ընկերակցութիւն, ո՛չ մէկ կազմակերպութիւն չի կրնար ծնիլ՝ առանց պէտքի և պահանջի արտայայտութիւնն ըլլալու այն ժողովուրդին՝ որուն յարակից մաս կը կազմէ և ինք:

Ընկերական կեանքը բազմակողմանի զարգացումի մը պէտք ունի, ըսինք

վերև: Վասն զի քաղաքակրթութիւնը ուրիշ բան չէ՝ բայց եթէ մարդկային կեանքի ամբողջական արտայայտութեան բաղմակողմանի մշակութիւնը: Այնքան բաղմակառուն ու կնճռոտ և միանգամայն ա՛յնքան լուրջ և նուիրական է այս գործը, որ աշխատութեան իմաստուն և արդարակշիռ բաժանումը միայն կրնայ ապահովել անոր լուծումն ու յաջողութիւնը: Այս բաժանումը սովորական (normal) ուղղութեամբ մը կատարուած չերևիր մեր հրապարակային կեանքին մէջ գծախտարար: Բայց ութիւններու յարգանքին մէջ չենք թերանար: Բայց կարծեմ չենք սխալիր մեր այս անվերապահ դատաստանին մէջ՝ երբ նկատի առնենք մանաւանդ այն ցաւալի իրականութիւնը թէ հրապարակի վրայ սովորական օրաթերթեր՝ մեծ մասամբ իրերանման՝ կը վիտան, իսկ զուտ մասնագիտական հանդէսներ գրեթէ բացորձակապէս կը պակսին: Չենք ուզեր այնքան յոռետես ըլլալ՝ ըսելու համար թէ այդ գործին յարմար մարդիկ և միջոցներ կը պակսին մեր մէջ:

«Տաճար»-ը, հեռի բոլորովին կուսակցական կռիւներէ և դատակարգային շահապաշտպանական և արհեստակցական անաղնիւ ձեռնարկներէ, ինչպէս նաեւ զերծ հաւատարապէս ռամկական-կղերամոտութեան և արմատական-մոտաւորականութեան նախապաշարունակներէ, յարգելով և կիրարկելով գործի բաժանման սկզբունքը, պիտի ստանձնէ քաղաքակրթութեան կրօնական ճիւղի ողջամտօրէն մշակման գործը, ժամանակիս ոգւոյն պահանջումին համաձայն ընթացք ունենալով ըստ ամենայնի և ըստ կարելոյն:

Բայց մեր զբաղումը պիտի չըլլայ ոչ

կրօնքն ըստ ինքեան, ուրիշ խօսքով՝ կրօնքի շատագովական մէկ հանգէսը պիտի չըլլայ «Տաճար»-ը, այլ կրօնքի իմաստասիրական վերլուծումը, խրդճամիտ ուսումնասիրութեամբն ու մշակումովը անոր բոլոր ճիւղաւորումներուն, բաժանումներուն և ստորաբաժանումներուն:

Արդարեւ կրօնքը ունի իր պատմութիւնը, արտաքին և ներքին: Արտաքին պատմութեան առարկայ կը կազմեն հրամանակարգ վարդապետութիւններ (dogme), հրապարակային պաշտամունք, ծէսեր եւն. իսկ ներքին պատմութիւնը կ'զբաղի բուն իսկ կրօնքին հոգիով, իր խորհուրդներով, իր ներքին կեանքով:

Կրօնքը ունի իր իմաստասիրութիւնը, իբրեւ աղբիւրը «վերանցական ճշմարտութիւններու»:

Ասկից կը հետեւի որ «Տաճար» իբրեւ կրօնաթերթ իրեն համար պիտի ունենայ մշակելի նիւթերու պէսպիսութիւն մը՝ կազմուած կրօնագիտական, բարոյագիտական, եկեղեցագիտական, պատմական, իմաստասիրական, եկեղեցական-օրէնսգիտական, հնախօսական, մեկնաբանական, ծիսագիտական, ռամկագիտական (folklore) բեմասացական, կրօնա-գեղարուեստական եւն գրութիւններէ կամ ուսումնասիրութիւններէ:

«Կար ժամանակ մը՝ երբ կրօնքը կը բռնանար գիտութեան վրայ յանուն հեղինակութեան և աւանդութեան. այսօր յաղթական գիտութիւնը բռնանալու վրայ է հոգիին և մտքին վրայ՝ յանուն բնագիտի և նիւթին»։ այսպէս կը գրէ Եւ. Շիւրէ իր Sanctuaires d'Orient գործին մէջ (էջ 73), և յետոյ կը յաւելու. «Ճշմարտութիւնը մէկ է՝

կամ բնաւ չիկայ: Եթէ գիտութիւնն ու կրօնքը, եթէ բնութիւնն ու բարոյականը, եթէ տիեզերքն ու մարդը երկու անվերածելի եղբեր են և առանց գերագոյն սկիզբի՝ մին և միւս տուտ են հաւասարապէս, զուտ բանդադուշանք և ոչնչութիւն: Վերացական գիտութիւնը անհոգի բան (verbe) մ'է. ան կ'անջատէ ու կը ցրուէ: Բայց իմաստութիւնը, որ սիրոյ գիտութիւնն է՝ կիրարկուած հոգիին և մարդկութեան, կը միացնէ և կը կեդրոնացնէ. ան կենդանի Բանն է»:

Այս խօսքերը, զոր կը կրկնենք մեծահամբաւ հեղինակին հետ, խիստ պառչած են ներկայ դարու և հրահանգիչ արտականոն հոսանքներէ տարուող մտքերու: Կրօնքը գիտութեան թշնամին չէ, այլ ընդհակառակը գիտութեան հետ «վերաձուլուելով կենդանի զօրութեան մը մէջ» նուիրուած է «հոգիները ստեղծելու և

կազմելու արուեստին... մարդկութեան բարիքին և վրկութեան համար» (Les grands initiés. — Ed. Schuré; էջ 30 Յառաջաբան):

«Տաճար»-ի մէջ քարոզուած կրօնքը «Սիրոյ գիտութեան» վրայ հիմնուած պիտի ըլլայ միշտ, ինչպէս նաև այն հաւատքին վրայ՝ «որ յառաջ խոյացող և ճշմարտութիւնը գտնելու վստահութեամբ գօտեպնդուող մարդին արիութիւնն է» և «բանականութեան ջահը» (Նոյն, անդ, էջ 31):

Երանի՜ թէ Տաճար իր նպատակովն ու ուղղութեամբ կարենար իր գիտակից և աննախապաշար երկրպագուներն ունենալ և իր նիւթական շինուածքին մէջ, իր պարունակութեամբ մէջ ծաւալելով «կենդանի Բան» ինչունչը, վերածնէր հոգիները նոր ճշմարիտ կեանքի մը մէջ:

Տաճար-ի սպասարկողներու միակ և անկեղծ բաղձանքն է այս:

ԿՐՕՆԱ-ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐՕՆՔԸ ԵՒ ԻՐ ԶԱՆԱԶԱՆ ԴԻՄԱՅԵՂՈՒՄՆԵՐԸ

Նիւթը, որով կ'ուզենք զբաղիլ հոս, այնքան լուրջ, բարդ ու կնճռոտ է՝ որ թերեւս ձեռնարկնիս իսկ յաւակնութիւնն նկատուէր, եթէ մեր կօչումը միւս կողմէ չպարտադրէր զմեզ մեր կարողութեան ներածին չափով միջամուխ ըլլալ անոր, եթէ ոչ խնդրին վերջնական լուծումը՝ այլ գէթ անոր հնարաւոր լուսարանութիւնը բերելու անկեղծ փափաքով: Չենք գիտեր թէ պիտի կրնանք յաջողիլ, բայց խղճի պարտք մը կատարած ըլլալու գոհունակութիւնը թերեւս ունենանք գէթ, այսպիսի ժամանակի մը մէջ, ուր ծեծուած կենսական խնդիրներու լրջութիւնը աւելի իրենց ձեւական տեսակէտէն կ'ըմբռնուի՝ քան թէ իրական արժէքի հայեցակէտէն:

Որ և է խնդրի լուսարանութիւնն կախում ունի անոր արամաբանօրէն կատարուած վերլուծական քննութենէն: Մենք այս սկզբունքին պիտի հետեւինք մեր առաջադրեալ նիւթի քննութեան և լուսարանութեան համար:

Որ և է խնդրի լուսարանութիւնն կախում ունի անոր արամաբանօրէն կատարուած վերլուծական քննութենէն: Մենք այս սկզբունքին պիտի հետեւինք մեր առաջադրեալ նիւթի քննութեան և լուսարանութեան համար:

Կրօնքը՝ իբրեւ բառ՝ ծանօթ է սովորուած: Կը խօսինք անոր թեր կամ դէմ, ընդհան-

բառայն ստորուելով հասարակաց կարծիքի հոսանքէն կամ առաջնորդուելով գիտական նախապաշարումներէ՝ գորս ըմբոստ միաքը կը շինէ իրեն մէջ և իրեն համար՝ իրրե հակահարուած ժողովրդական կամ ուսմ-կական նախապաշարումներու : Մեր նիւ-թէն դուրս է փաստել այս ճշմարտութեան անհերքելիութիւնը : Բայց ամէն բառ իր կեանքը, հետեւաբար եւ իր պատմու-թիւնը, իր հոգեբանութիւնն ունի, և բա-ներու ուսումնասիրութիւնը իմաստասի-րական վերլուծումի մը կը կարծաթի անհրա-ժեշտարար : Կրօնքը, իրրե գաղափար, իրրե ընտ - հոգեխօսական երևոյթ, ցաւալի է խոստովանիլ թէ՛ քիչ մտքերու մասշնչի և հասկնալի եղած է ցարդ՝ մեր ազգային-մտաւորական չըջանալին մէջ մասնաւորա-պէս : Երկու մոլեռանդ իրերահալած արա-մադրութիւններ աններելի անհասկացողու-թիւններով Կրօնքը խկապէս անըմբռնելի՝ վերայական և անիրական էակութիւն մը (*caelestis*) դարձուցած են : Մեր բաղձանքն ու նպատակն է, Կրօնքներու պատմու-թեան և տրամախոհութեան միզ ընձեռած միջոցներով և առանց մանրամասնութիւն-ներու մանկուլ՝ պարզել հոս այդ գաղա-փարը իր զանազան ձեւափոխութիւնե-րուն մէջ :

Նախ պէտք կ'զգանք մեր բանախելիին (*these*) իրրե սկզբնական տեսութիւն (*théorème*) բսել թէ՛ բնական ընտրու-թեան (*sélection naturelle*) կաւ եղալու-խտքեան (*évolution*) օրէնքով՝ մարդկային բնախօսութեան յառաջաւորական զարգա-ցումի սկզբունքը անլիմեշխօրէն անհրաժեշտ է կիրաւիել նաեւ մարդկային հոգեբանութեան աստիճանական զարգացումին : Բնութիւնը՝ որուն անուշով և ի նպաստ կը խօսի գիտնական աշխարհը և ուսկից անգիտու-թեամբ կը խորշի յաճախ խորհրդապաշտ և բնագիտական միջքը՝ որ բառացի և ան-հոգի կրօնքի մը բիրտ լուծին տակ ստը-կացած՝ իրական նիւթը կ'արհամարհէ երե-ւտակայական նիւթականացումներու կամ մարմնաւորուած անիրականալի տեսական-ներու հրապոյրէն չլմորած, այն Օրէնքն է՝ որով տիեզերքի բոլոր երեւոյթներն ի յայտ

կուգան : Այդ օրէնքը որուն մէջ կար և կայ՝ ի զօրութեան՝ համակարգեալ և դա-սաւորեալ ստեղծագործութեան մը ամբող-ջական ծրագիրը, գործն է սկզբնապատ-ճառ մեծ Կամքին՝ որ կը գործէ՝ անդադ-րում և անվրէպ ուղղութեամբ՝ գերագոյն իմացականութեամբ և ճշմարտութեան վրայ հիմնադրուած այդ անյեղլի Օրէնքով : Մարդը, իրրե էական և անբաժան մասը ստեղծագործութեան, արարածն է այդ գերազանց Կամքին, միջնորդութեամբ Օրէնքին :

Համակարգեալ ծրագրի այս տեսութեամբ որով Օրէնքը կը գործէ բնութեան մէջ և բնութեան միջոցով, աստիճանական յա-ռաջացումով մը իրերը առաջնորդելով իրենց յաւ (*ultime*) ճակատագրին, մար-դը՝ բնականաբար՝ չէր կրնար, իրրե բացաւութիւն, անմիջական և վերջնական կատարելութեամբ մը յայտնուիլ : Բնու-թեան մէջ ազատ՝ բայց Օրէնքին հանդէպ կարեկան է մարդուն ալ դիրքը : Նա՝ մարդը պարտաւոր էր անցնիլ դէպի կա-տարելութիւն առաջնորդող բաղմաթիւ հանգրուաններէ : Նիւթական, կամ սուրբ գրական լեզուով՝ հողեղէն մարդէն մինչեւ բանական, կամ սրբազան լեզուով՝ հոգե-ղէն մարդը կեանքի զանազան աստիճա-նաւորումներ կան, որոնք սակայն կրնան երեքի վերածուիլ :— Հոս մասնաւոր ու-շադրութեան կը յանձնենք Ծննդոցի Բ. Գլխ. 7րդ համարը, ուր ըսուած է. « Եւ ստեղծ Տէր Աստուած գնարիւն հող յերիւ և փչեաց յերես (*Եբր. յանգոււն*) նորա շունչ կենդանի և եղև մարդն յոգի կենդա-նի » : Շատերու ուշադրութենէն վրիպած այս խորհրդաւոր համարը կարծես մարդուն կրած եզափոխութեանց երեք ստորագրեալ զիմայեղումները կամ աստիճանաւորու-մները միտք ունի մասնանշել .

1. Անգիսակից շրջան, ՆԻԻԹԱԿԱՆ ՄԱՐԴԻԸ .
 2. Կենդանական կամ անասնական շրջան, ՇՆՉԱԿԱՆ ՄԱՐԴԻԸ :
 3. Բանական կամ Դիսակցական շրջան, ՀՈԳԵԿԱՆ կամ ԲՈՒՆ ՄԱՐԴԻԸ :
- Կեանքի այս չըջանները կամ փուլերը մի

անգամ ընդունելէ վերջ՝ հետեւական է եզրակացնել թէ ընտելիւնը, իբրեւ սատուածային կամքի հրաշալի մէկ գործը, մեծ դեր ունեցած է և ունի մարդուն կողմութեան և աստիճանական զարգացումին մէջ։ Բնութիւն և մարդ ա՛յնքան սերտ առնչութիւն ունին իրարու հետ՝ որ կարելի է ըսել թէ առաջինը պարտադրիչ հեղինակութեամբ մը երկրորդին մէջ կը խօսի ու կը գործէ և մարդը ընտելեան խօսքն ու գործը կը թարգմանէ։ Ասկէ կը հետեւի որ մարդուն անմիջական դաստիարակն է ընտելիւնը՝ որուն թելադրութեամբ կը կազմուի նախապէս ամէն ինչ և՛ ըստ այսմ՝ հոգեխօսական ամէն վիճակ անհրաժեշտօրէն կը համապատասխանէ ընտելեան տպաւորութեան մը։ Յաւիճիքը, զոր օր . . . ընտելեան վատազգեցիկ կամ վիրաւորիչ տպաւորութեան մը հոգեխօսական մէկ արտայայտութիւնն է կենդանիին կամ մարդուն մէջ։

Վերացական գաղափարներն ալ, իբրեւ հոգեխօսական վիճակներու յայտնութիւններ, տարբեր կերպով չեն կրնար բացատրուիլ։ Ասոնց կարգէն է ահա նաեւ ԿՐՕՆՔԸ։

Կրօնքը, իբրեւ բնա-հոգեխօսական գերադասեց երեւոյթ, մայր-բնութեան եւ մարդկային բնութեան միջեւ հաղորդակցութեան մեկ կապն է։ Եւ իբր այս՝ կրօնքին ծագումը պէտք է վնասել անասուն մարդուն մէջ. ան ի յայտ կուգայ հետաքրքրութեամբ, կը բարեփոխուի հայեցողութեամբ, կը կերպարանափոխուի քննութեամբ և կը կատարելագործուի յայտնատեսութեամբ կամ յայտնութեամբ և փոփոխումի այս ամբողջ շրջանը կը բոլորուի մարդկային ֆիզիքական կազմախօսութեան առարկանակա՛ն շրջումին շնորհիւ։

Կրօնքը ա՛յսպէս սահմանելէ վերջ՝ հոս կը դնենք անոր կրած զանազան դիմացեղունները՝ դարերու ընթացքին մէջ։

1. Կրօնքը իբրեւ նախապաշարում։
2. Կրօնքը իբրեւ մոլեռանդութիւն։
3. Կրօնքը իբրեւ հստակաշտ զգացում։
4. Կրօնքը իբրեւ ներհայեցողութիւն։
5. Կրօնքը իբրեւ յայտնատեսութիւն կամ յայտնութիւն։

6. Կրօնքը իբրեւ կեանք։
7. Կրօնքը իբրեւ հաւատք։
8. Կրօնքը իբրեւ սէր։
9. Կրօնքը իբրեւ միջոց զԱստուած ապրելու։
10. Կրօնքը իբրեւ յաւիտենական կեանք։
11. Կրօնքը իբրեւ գիտակցական կեանք։
12. Կրօնքը իբրեւ ընկերայաբանական կեանք։

Մենք՝ առայժմ՝ իւրաքանչիւր դիմացեղունի վրայ համառօտ տեսութիւններով միայն պիտի բաւականանանք։ Աւելին՝ երկար և մանրակրկիտ ուսումնասիրութեան կը կարօտի։

×

Ա. — Կրօնքը իբրեւ նախապաշարում. — Աւպերդ Ռէվիլը իր Ներածութիւն Կրօնից պատմութեան գործին մէջ կը գրէ. «Կրօնքը մարդկային կեանքի որոշողութիւնն է (détermination) զգացումովը կապի մը՝ որ մարդկային հոգին կը միաւորէ այն խորհրդաւոր հոգիին հետ, որուն տիրապետութիւնը՝ աշխարհի և իր վրայ՝ կը ճանչնայ, և որուն հետ ի վերջոյ միացած կ'զգայ ինքզինքը»։ Բայց մեր տեսութեամբ, զոր վերը պարզեցինք, Կրօնքի այս սահմանումը կանխահաս է, վտանգի նախ քան այդ զգացումի զարթումը, նախ քան այդ որոշող կարողութեան կազմուիլը՝ որ ինքնին իմացական զարգացումի նախընթաց չըրջաններ կ'ենթադրէ, ընտելեան եւ մարդուն միջեւ հաղորդակցութեան նախնական կապ մը կայ, ուրիշ խօսքով՝ ընտելիւնը առաջին կրօնքն է մարդուն։ Կենդանական կամ անասնական շրջանին մարդը, որ գտած է ինքզինքը խորհրդաւոր զօրութիւններու, կամ աւելի ճիշտ՝ երեւոյթներու ազդեցութեան տակ, և որուն մէջ քննող և վերլուծող բանը (raison) իրեն սաղմնային և անգործ (inerte) վիճակին մէջ կը գտնուէր տակաւին, կը յղանայ՝ առանց ֆենոքեան կարծիքներ, այսինքն ընտելիւնը իր նախնական գաղափարապատկերները կը դրոշմէ անոր կերպնկալ գանկին մէջ ոչ այնքան ինքնատիպ երփ-

ներանգութեամբ մը՝ և ա՛յսպէս կը կազմուին նախապաշարունակները։ Նախապաշարունակները, ուրեմն, այնքան արհամարհելի չեն՝ որքան կ'ենթադրէ մասալորական չըջանակի՝ յանուն ընկերայրանական հարցերու խօսող՝ այլ իսկապէս անոնցմով գրադելու անկարող և անտրամադիր հասարակաց կարծիքը։ Վասն զի անոնք՝ իբրև առաջին յայտնութիւններ կամ թարգմաններ կրօնական զգացումին անցեալին մէջ ունեցած են իրենց գոյութեան իրաւունքը և ներկայիս մէջ ունին իրենց կարեւորութիւնը, քանի որ «ազգերու պատմութեան ծաղումը ժամանակակից բլլալով անոնց կրօնքներու պատմութեան ծաղումն», ինչպէս կ'ըսէ Գ. Ռաուլինսոն։ առանց այս վերջինին խնամատ և մանրակրկիտ ուսումնասիրութեան՝ անկարելի է ըմբռնել ժամանակ փոփոխութիւններու ներքին կեանքը՝ հոգեբանութիւնը։

Երկուդը այս նախապաշարունակներու կարգէն է, որ կրօնքի զգացումը զարթումէն յետոյ՝ «զօրաւոր նեցուկը» եղած է անոր, ինչպէս կ'ըսէ Սքոտլանդ Միլլ։ Նախապաշարունակը՝ այսպէս՝ իբրև մայր-բնութեան սպառնալուծեան հոգեխօսական առաջին արտայայտութիւն, իբրև նախզգացում, անհրաժեշտ նախաքայլն է դէպ ի կրօնի կատարելով ըմբռնում։

Մաքս Միլլէր ալ իր Ներածութիւն Կրօնից գիտութեան գործին մէջ ըսած է. «Կրօնքը մտքին մէկ կարողութիւնն է, որ ասակ կ'ընէ ըմբռնելու անհունը զանազան անուններու և յարաբերութիւն ծրարողութիւններու տակ, առանց այս կարողութեան, ոչ մէկ կրօնք հնարուոր պիտի ըլլար և ո՛չ իսկ կուսքերու և փետիշներու պաշտամունքը, և որքան ալ քիչ ականջ դնենք՝ ամէն կրօնքի մէջ կրնանք լսել հոգիին հեծեծանքը, անխմանալին իմանալու և անբացատրելին բացատրելու համար ճիգի տալ մը, դէպի անհունը բաղձանք մը»։ Արդարեւ անհունը, որով չըջապատուած է մարդը՝ իբրև հոռուաբար գոյութիւն մը, և որ իսկապէս միջոցի պիտականուն և անըմբռնելի մէկ գաղափարապատկերն է կամ Բնութեան համայնական կարի վերանցու-

կան (transcendental) մէկ սահմանումը՝ մարքին փորձառազուրկ մէկ իմացումին վրայ հիմնուած, թերեւ առաջինը եղած ըլլայ՝ որ արթնցուցած է մարդուն մէջ հեծեծանք մը, բաղձանք մը և ապա ճիշդ մը՝ զանի (անհունը) ճանչնալու, ըմբռնելու և բացատրելու։ Անհունն ալ՝ այսպէս՝ կը տեսնուի որ ինքնին նախապաշարունակն է, այսինքն խորհրդաւոր մեծդի երեւոյթի մը թափանցելու անկարող մտքին յանձնարար վեկ ընթողումը, որ սակայն անփոփոխ մնալու դատապարտուած է կարծեա, հակառակ «զանազան անուններու և յարաբերութիւն ծրարողութիւն», քանի որ միջոց և ժամանակ՝ իբրև մտքին զուտ յառաջագունեան (à priori) յղացումներ՝ վեր կը մնան ամէն տրամաբանական դրական և տիրական բացատրութենէ։

Անգործ նիւթէն ձերբազատուած և գործօն չունչով կենդանացած անասուն-մարդուն կրօնքը նախապաշարունակներով ի յայտ կուգայ ուրեմն։ Բնութեան առաջին դասն է այդ, Օրկնիսն առաջին նախադիւր երգերագոյն Կալիսն առաջին յայտնութիւնը՝ Բնութեան եւ Օրկնիսն միջոցով։

Աւելորդ է ըսել թէ նախապաշարունակներու ծնունդ են նաև նիւթապաշտութիւնը փետիշապաշտութիւնը, կուսպաշտութիւնը, քարապաշտութիւնը, ծառապաշտութիւնն ու կենդանապաշտութիւնը, երկնային մարմիններու և օգերեւոյթներու պաշտամունքը ևն, ինչպէս նաև ամէն տեսակ հմայուլութիւններ և կախարդութիւններ, որոնք բոլորն ալ կրօնային գոյացութիւն մ'ունին իրենց մէջ։ Բնութեան և մարդուն միջև թաքուն և ներքին յարաբերութեան մը հոգեխօսական զանազան արտայայտութիւններն են անոնք, մարդուն բնախօսական կազմուածքին կամ տրամադրութիւններուն համապատասխան։

Բ. — Կրօնի իբրև մոլորանշարիւն. — Նախապաշարունակները յաճախ, դարերու հոլովումներու մէջ զանազան արգելիչ պատճառներու հետեանքով—գործ օր. միջավայրի, կլիմայի և ասպրեակերպի անփոփոխելիութեամբ—քարանալով՝ միտքը կ'ըմբոստացնեն որ և է նոր ճշմարտու-

թիւան դէմ՝ զոր գիտութիւնը կամ յառաջդիմութիւնը նորանոր լուսարանութիւններու շնորհիւ ի յայտ կը բերէ։ Ըմբոստ մտքին իր կանխակալ ըմբռնումին վրայ յամառիլ մնալը, կամ հինի պահպանումին համար անոր ցոյց տուած այլամերժ մտութիւնն ու կոյր եռանդը կը կոչուին մոլեռանդութիւն։ Մոլեռանդութիւնը կը մերժէ որ և է քննութիւն և վերլուծութիւն՝ աւելի պարզ խօսելով՝ անիկա ծնունդ է սղիտութեան, որ չի կրնար չափ դնել մտութեան ու եռանդին, որոնցմով միտքը կը կառչի անբաժան այս կամ այն անանդրադարձ համոզումին։ Իբրեւ հինի քարացումը՝ մոլեռանդութիւնն ալ սակայն կրօնքի մէկ երեւոյթն է։

Գ. — Կրօնի իբրեւ եսապաշտ զգացում. — Առէք ամէնաւաղիկ ճճին, ի՞նչ կ'ըսեն միքրօսը, սպառնալից ճնշում մը գործեցէք անոր վրայ, կամ նոյն իսկ թիթե հալումի փորձ մ'ըրէք, անիկա իսկոյն պիտի գալարուի, տագնապալից շարժում մը պիտի կատարէ և փախուստի պիտի աճապարէ։ Հարեանցի դիտող մը պիտի ըսէ. Բնազդն է այդ իսկ վերլուծումնասէր գննող և դատող մը պիտի յարասէ. մահուան երկիւղը և կեանքի սէրն է այդ, որոնք՝ բնականաբար՝ բնութեան ազդեցութեամբ կը գործեն անոր մէջ։ Այս բնազդը, ոմանց մէջ կարեկան և այլոց մէջ ներգործական, հասարակաց է բոլոր կենդանիներու, ընդ որս և մարդուն։ Մահուան անխուսափելի իրականութեան առջև երկիւղը, այսինքն մտքին անէացումի դէմ անդուստ ըմբոստացումը, կը ծննդէ ապրելու սէրը՝ որ իր գոհացումը կը գտնէ ի վերջոյ խորհրդաւոր Գաղտնիքի մը մէջ՝ զոր կը պաշտէ։ Հոգին եսապաշտ է, տարակոյս չիկայ, բայց այդ ինքնամիտի զգացումը կեանքի պահպանման և յաւերժացման ամէնաէական մէկ պայմանն է։ Մահը անթարգմանելի սպառնալիք մ'է, որ աներեւոյթ գորութեամբ մը կուգայ կտրելու կեանքի թելը՝ որուն վրայ աշխարհն կը գուրգուրայ հոգին։ Մահուանէ խոյս տուող եսապաշտ այս զգացումը, մին բնահոգեխօսական երեւոյթներէն, հազորդակցութեան նոր կտու մը կ'ստեղծէ մարդ-

կային հոգիին և անիմանայի ու անբացատրելի Զօրութեան կամ զօրութիւններու միջև։ Այդ կապը եսապաշտ հոգիին կրօնքն է։

Դ. — Կրօնի իբրեւ ներհայեցողութիւն. — Մարդը, գտնելով ինքզինքը գաղտնիքներով լի բնութեան մը դէմ, բնական է որ նախապէս հետաքրքրուէր իր իսկ անձով, պաշտպանելով ինքզինքը մասնաւորապէս այն գորութիւններուն դէմ, որոնք իր կեանքի ներդաշնակութիւնը խանգարելու բնոյթն ունէին։ Ու երբ՝ առաջին և անմիջական տպաւորութիւններու շնորհիւ՝ իր ճակատագրին հետ վերաբերութիւն ունեցող հարցերու մասին լուսարանուէր մասամբ, ապա անդրադարձ ներհայեցողութեամբ իր հետաքրքրութիւնը ընդհանրացնելով՝ ուրիշներու ճակատագրին ալ պիտի միացնէր իրենին։ «Նստախրական զգացումն կրօնական համակրանքի մը անցումն» է այս, զոր Շանթբի տը լա Սօսէյ իր Կրօնից պատմութեան մէջ կ'ընծայէ Պուտտայականութեան։

Ներհայեցողութիւնը մտքին ներքին անդրադարձ գննութիւնն է կեանքի այն երեւոյթներուն՝ որոնք արտաքին աշխարհի մեր զգայրաններու վրայ գործած ազդեցութեամբ մեր ներսը կը կատարուին։ Ասոնց մէջ գլխաւոր տեղը կը բռնէ վշտի ու տառապանքի բնահոգեխօսական երեւոյթը կամ վիճակը, որ մասնաւորապէս ծնունդ տուած է Պուտտայականութեան։ Բայց Պուտտայականութիւնը, իբրեւ իրապէս ներհայեցողական կրօնք, կարեկան և կորովազուրկ հանգամանքով մը ի յայտ կուգայ, բնական արդիւնք թերեւս այն մեղկ միթնոլորտին՝ որուն մէջ և որով ծնած է այն։ Կարեկան ըսինք, վասն զի կեանքի կնճռոտ առեղծոճներու լուծումը ուղած է գտնիլ ճարահատ և յուսաբեկ ծայրայեղ ինքնամիտութիւն մը, կամ ինքնամոռացութեան մը միթին ու անորոշ դաւանանքը եղող վերացական Նիրվանայի մը մէջ։ Բնութիւնը աւելի՛ ներգործած է մարդուն վրայ, որքան մարդը չէ կրցած սփրանալ բնութեան, հետեւաբար և պարտուած է և յանգած անէացումի համակերպութեան։

Անէացումի այս համակերպութիւնը , արհամարհոտ ներանձնացումով , «կրօնական համակրութիւն»ով մը սարածուելով նաեւ ամբողջ կենդանական ու բանական աշխարհի վրայ , թէեւ արդիւնք իրերու և երևոյթներու ներքին զննութեան , չէ կարելի նկատել անշուշտ կորովի և վերլուծող մտքի որոշողութիւն (determination) :

Ներհայեցողական - ներգործական է սակայն այն կրօնքը՝ որով ներշնչուած ու խանդավառուած էին Իսրայէլի մարգարէները : Ներգործական է , վասն զի հոն հոգիին ու Ենովային միջև հաստատուած հաղորդակցութիւնը դրական բան մ'է , և նոյնքան մարդկային է ո՛րքան աստուածային : Բնութեան մէջ Օրէնքի միջոցաւ Ենովայի կամքն է որ կը ներշնչէ այդ խորհրդաւոր տեսանկյունները , որոնք իրենց կարգին խանդավառ երեւակայութեամբ մը և պատկերաւոր լեզուով մը , բնութեան տիրացումով մը և Օրէնքի թափանցումով ու գերազոյն Կամքին գիտութեամբ կը զարդնեն գեղեցիկ ապագան , որ յայտնութեան մեծ կրօնքի՛նը պիտի բլլար :

Ե . — Կրօնքը իրեւ յայտնաբերուեալ յայտնաբերուեալ . — «Տիեզերք ամբողջ կամք մ'է» . Տանցիկի յուստագիտութեան վարդապետ Շորէնհաուրի փիլիսոփայական այս հզօր տեսութիւնը , որ համաստուածեան վարդապետութեան դրոշմ մը կը կրէ իր մէջ , կրնանք վերածել աւելի ուղղամիտ բացատրութեան մը . Տիեզերական կամք մը կայ , որ կը գործէ ամէն բանի մէջ և ամէն բանով . յամենայնիւ և ամենայնիւ : Այդ ստեղծագործ կամքն է՝ որ կը բացատրէ թէ՛ արտաքին աշխարհի բոլոր երևոյթները և թէ՛ մեր ներքին աշխարհի հոգեկան բոլոր վիճակները : Գիտութիւնը որքան հսկայական քայլերով յառաջդիմէ , որքան ալ մեր ծանօթութիւններու չըջանալը ընդլայնի , իրերու գոյացութիւնն ու գործարանաւորութիւնը միայն պիտի ճանչցուին , իսկ անոնց էութիւնը , անոնց առաջին պատճառն ու վերջին վախճանը պիտի մնան միշտ գաղտնիքներ՝ եթէ անոնց թափանցելու աստիկ տարբեր հոգի մը չօժանդակէ գիտութեան : Այդ զօրութիւնը միզի համար

սկզբնապատճառ Կամքն է , ամենարժանադարձ Զգացումի մը յղացում և գերազանց իմացականութեան մը ծնունդ : Զգացումի , զգացականութեան և Կամքի միասնական այն գերագոյն Երրորդութիւնը Կեանքն իսկ է՝ իր ներուժ (énergique) տիեզերականութեամբ : Ասի ճշմարտութիւն մ'է այնքան անհերքելի՝ որքան ստույգ է թէ մարդը մանրանկարն է խոշոր Տիեզերքին : Արդ՝ տրուած բլլալով միւս կողմէ իբրեւ գիտական առած (axiome) թէ Բնութիւնը կը գործէ մարդուն մէջ և թէ՛ մարդը կ'ապրի Բնութիւնը , մենք առանց վարանելու կ'եզրակացնենք թէ մարդկային հոգեբանութեան վերլուծական ուսումնասիրութիւնն է որ պիտի կրնայ բացատրել Տիեզերքի բոլոր առեղծուածները . ուրիշ խօսքով՝ «մարդկային հոգի՛ն է Տիեզերքի բանալին» , ինչպէս կը գրէ չառ ուղիղ արամախոհութեամբ «Մեծ խորհրդադէտները»ի (Les grands initiés) մեծանուն հեղինակ Եւ . Շիւսէ իր «Արեւելքի Սրբապաշտները» (Sanctuaires d'Orient) գործին մէջ , կամ Պիլատգորի մէկ խօսքին համաձայն՝ «Ճանչցի՛ր ինքզինքդ , ու պիտի ճանչնաս յաստուածներու տիեզերքը» : Ինքնաճանաչութիւնը , ուրիմն , առաջին և էական պայման է արդարեւ ճանչնալու և ըմբռնելու Տիեզերքը իր անբողջութեան մէջ : Արդ՝ եւր կամ հոգին՝ նկատուած իբրեւ ներդաշնակ ամբողջութիւն մը զգացական , իմացական և կամեցողական զօրութիւններով՝ անդրադարձումն է , կամ աւելի ճիշտ «պատկերն» ու «նմանութիւնն» է Տիեզերքի մէջ գործող ինքնագիտակից և նոյն զգացական , իմացողական և կամեցողական զօրութիւններու բացարձակ և գերազանց լրութեամբ կատարելացած Հոգիին , որ տարբեր լեզուներու մէջ՝ ազգերու հոգեբանութեան պէսպիսութեան արդիւնք՝ զանազան անուններով կ'որակուի :

Այս տեսութեամբ և այս վերլուծումով Բնութեան և մարդուն միջև հաղորդակցութեան կապը աւելի գիտակից և աւելի աննիւթական զօրութեամբ մը կ'ամրապնդուի : Հոգին արտաքին աշխարհի ներգործական տպաւորութիւններէն վերջ ,


ներաշխարհային ինքնանդրադարձ հայեցողութենէ մը յետոյ՝ զօրեղ և ինքնամիտի յայտնատեսութեամբ մը (intuition) կը տիրանայ բոլոր այն ճշմարտութիւններուն՝ որոնք իրմէ դուրս և իր մէջ կը պարզուին : Ուրիշ խօսքով , Բնութիւնը երկար աշխատելով մարդկային հոգիին մէջ՝ չնորհեղափոխութեամբ յառաջացած և դէպ ի կատարելութիւն ձգտող մշտնջենական եղանութեան մը (devenir) զարգացած Յայտնութեան՝ կ'առաջնորդէ մարդը գաղտնաթափանց՝ ինքնավստահ և անմիջական Յայտնատեսութեան մը :

Մտքին , կամ ինչ որ նոյնն է՝ հոգիին այս յայտնատեսութիւնը , իրեւ կրօնք , կը փոխադրէ մարդկային նոյն այդ հոգիին՝ նիւթէն և նիւթական աշխարհէն բարձր՝ գաղափարի նոր և վսեմ աշխարհներու մէջ . կը բոցավառէ միտքը նոր տեսլականներով , որոնք այնքան իրական են՝ որքան արտաքին աշխարհը : Կեանքը կը պարզուի իր բովանդակ սեռնութեանը մէջ , միտքը թախք կ'առնէ ժամանակի անանջրպետ և անծայրածիր միջոցի մը մէջ , երազներու և երազանքներու , խանդերու և սքանչալցումներու անհորիզոն և վարդատեսիլ երկինքներու ընդմէջէն , թափ առլով սրտի յուզումներուն , տրոփումներուն և բաղձանքներուն : « Իր անծանօթ խորութեան մէջ՝ աստուածային հոգին չբռնած նայուածքով մը կը վնէ՛ բոլոր աշխարհները , անցեալը , ներկան և ապառնին , զորս կը միաւորէ Յաւիտենականութիւնը » : Սփինքսին քողը կը պատուի և մարդը՝ համագրաւուած իր գաղափարականի [idéale] վիճակութեամբ՝ կը մարդարէանայ այսինքն կը տիրանայ իր ճակատագրին :

Հոս կը պարզուի տնայնա ներշնչումը գաղափարը՝ որ յարակից է յայտնութեան գաղափարին : Ներշնչումը deus ex machina մը չէ , ինչպէս կը կարծեն կամ կ'ըմբռնեն ամէն անոնք՝ որոնք ազատ կամքի ջիղը կը կարատեն մարդուն մէջ՝ ի նպատակ աստուածային բռնաւոր և եսապաշտ կամուցողութեան մը , որ առանց նկատի առնելու տիեզերական կարգուսարքի պահպանման պէտքը՝ իմաստուն և յաւիտենականութեան

թիւնը թուագիտական ճշտութեամբ մը չափող իմացականութեամբ հիմնադրուած Օրէնքին միջոցով՝ իր քմահաճոյքին խաղալիք կը դարձնէ և՛ Բնութիւնը՝ Օրէնքը՝ արտակեղծոն շեղումներու մէջ զննելով զանոնք : Ասի բացարձակապէս անհնար է : Ներշնչումը առարկայական և ենթակայական է միանգամայն : Բնութիւնը ինքնատու և կուտայ մարդուն , որ սակայն իրերու ներքինէն աւելի արտաքինին յարելով , հոգիէն աւելի նիւթին կտուղելով՝ կը կորսնցնէ իր մարդարէական յատկութիւնը , չլնորհելով և կուրանալով այն պերճ յայտնութեան հանդէպ՝ զոր գերագոյն հոգին կը պարզէ՝ դարերու ընթացքին մէջ աստիճանական սեռնութեամբ մը՝ մարդկային հոգիին առջև : Ներշնչումը՝ իր վերլուծական առումովը՝ առարկայական յայտնութեան մը և ենթակայական յայտնատեսութեան մը ի մտադրութեան հոգեխօսական մէկ խորհրդաւոր արտայայտութիւնն է , մարդարէական կամ տեսանօրական թափանցանց շունչով մը ոգեւորուած : Գերազոյն Եսին , կամ գերազանց Տեալականի մը կենսականութեամբ մարդկային եսին շնչաւորումն է այն , որ անհատական հոգի կամեցողութեամբ մը կ'ենթակայանայ : Այս ներշնչումը առաւել կամ նուազ ուժագնութեամբ մը , առաւել կամ նուազ սեռնութեամբ մը՝ հասարակաց է բոլոր կրօնքներու խորհրդագէտներուն [initié] և մասնաւորապէս խորայնի յստակատես նապիներուն , որոնք կրօնքը՝ նիւթականացնող միջոցի և ժամանակի պայմաններէն զերծ՝ խոր և արթուն գիտակցութեան մը լոյսով նախադուշակները և ռահվիրաները եղան Յայտնութեան մեծ կրօնին :

ԳԱՐԵԳՐԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ



ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ. — (Մsp. ԺԸ. 10) :

ԿՈՐՈՒՍԵԱԼԻՆ ԳԻՒՏԸ. — (Մsp. ԺԸ. 11 — 14.
Ղուկ. ԺԵ. 1—10) :

ՆՈՅՏԵՐԻՆ ԻՏԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ. — (Ղկ. Թ. 44—50) :

Ա. Հրեշտակները. — Հայ Եկեղեցին Նոյ 7 ին կատարեց «Սրբոց հրեշտակապետացն Դաբրիէի եւ Միխայէի եւ աւետայն երկնային զօրաց» տօնախմբութիւնը : Այս աւիթով Եկեղեցիին մէջ կարգացուած օրումն աւետարանին համառօտ մեկնութիւնը կուտանք «Տաճար» ի ընթերցողներուն :

Առաջին պարբերութեամբ Յիսուս կը դատապարտէ ամէն անոնք՝ որոնք կը յանդգնին արհամարհել Աստուծոյ թագաւորութեան համար կանաւորապէս փոքրացողները, «ղի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկնս է» :

Մեր նիւթէն դուրս է հրեշտակներու գոյութեան իմաստասիրական վերլուծումն ընել հոս . միայն թերեւ աւելորդ չըլլայ անցողակի ըսել թէ Աստուծոյ գաղափարի եղանակաւորումի ծնունդ կարելի է նկատել «երկնային զօրաց» բանակի մը գոյութիւնը :

Հին Կտակարանի մէջ հրեշտակ բառը գլխաւորաբար չորս իմաստով գործածուած է :

1. Աստուծոյ առաջնորդ չլլալը, «նա (Աստուած) առաքեացէ զհրեշտակ իւր առաջի քո» . այսինքն՝ աստուած քեզ առաջնորդ պիտի ըլլայ . (Մանդ. ԻԴ. 7, 40. — Ել. ԼԲ, 34) :

2. Պատգամաւոր, դատարան, ըսեն. «Եւ առաքեաց Յակոբ հրեշտակս . . առ Եսաւ» . (Մանդ. ԼԲ, 3, 6. — Ել. Ի, 14, 16. — ԻԱ, 21. — ԻԲ, 5 ևլն.) :

3. Աստուծոյ կողմէ զրկուած պատգամաւորներ՝ զորս Ս. Դիւքը կը նկարագրէ իրբն անիւթ հոգիներ և այրող կրակներ . «Ու արար զհրեշտակս իւր հոգիս և զպաշտօնեայս իւր ի հօւր կիզելոյ» (Սղմ. ԺԴ, 4)

և որոնք ի հարկին կը յայտնուին մարդոց մարդկային կերպարանքով . (Մանդ. ԺԸ, 1-22. — ԺԹ, 1-22. — Յովբ. ԺԲ, 12-15) :

4. Աստուծոյ ստուերը կամ ներկայութիւնը. «Մահու մեռանիցիմք՝ զի զաստուած (հրեշտակ Տաւոն) տեսաք . (Դատ. ԺԴ, 22) : Տիրոջ այս հրեշտակին անունն էր Սքանչելի (Դատ. ԺԴ. 18)՝ որ Եսայեայ մէջ յիշուած (Թ. 26) Աստուծոյ կամ Մեփայի (իշխան խաղաղութեան) ստորոգելիներէն մէկն է . (Բղդ. նաեւ Մնդ. ԼԲ, 30)» :

Երրորդ նշանակութեամբը նախնէն տեսլի տարածուածն ու սովորականն է : Այս առումով հրեշտակները քարի հոգիներն են : որոնք երկնքի մէջ Աստուծոյ անունը կը փառաբանեն և անոր պատգամները կը բերին մարդոց : Անոնք միջնորդներ են նաեւ ընդմէջ Աստուծոյ և մարդոց որդիներուն (Մարգարէ) : Ասոնց հակառակ զօրութիւնները կը կոչուին սատանայ կամ դեւ, որոնք չար հոգիներ ըլլալով՝ չարին սերմնը կը ցանեն մարդոց սրտերուն մէջ :

Հրեշտակներէն ոմանց պարտականութիւնն է հանել՝ մասուցանել «զազօթս արքոյն» և մտնել «առաջի փառաց Սրբոյն» . (Տովբ. ԺԲ, 15) : Ասոնք եօթն են թուով (Տովբ. ԺԲ, 15), որոնցմէ մէկն է Ռափայէլ և մնան ալ հաւանաբար Փարրիէլ (Ղուկ. Ա, 19) :

Թէ իւրաքանչիւր մարդ իր առածինն պահապան հրեշտակն ունի՝ ասիկա յետաժողով գաղափար մ'է՝ զոր չենք գտնել հին Կտակարանի հնազոյն գրութեաններուն մէջ : Այլ թէ հրեշտակներն ընդհանրապէս կը հակեն սուրբերու (Աստուծոյ հաճելի) վրայ, առանց մասնաւորներու հոգատարութեան նուիրուած ըլլալու՝ ասի բաւական բացայայտ կերպով կը հաստատուի Սաղմոսի խօսքերով . «հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո՝ պահել զիզ յաւեանայն ճաւապարհս քո ևլն» . (Սղմ. Ղ. 11, 12.

Բզդ. հաս. Ղուկ. ԺԶ, 22) :

Յիսուսի «հրեշտակը նոցա... տեսանեն զերեսս Հօր իմոյ» խօսքերէն չէ կարելի հետեցնել թէ մանուկները — վասն զի հոս աւետարանով փոքրկացածներուն վրայ է խօսքը — իրենց տառնձին պահապան հրեշտակներն ունին : Յիսուսի խօսքին բուն իմաստը սա՛ է . Աստուծոյ նախախնամութիւնը կը տարածուի ընդհանրապէս բոլոր վանդակ տիեզերքի վրայ, դաշտի շուշանէն և փոքրիկ ճնճղուկէն սկսեալ մինչև մարդը, բայց մասնաւորապէս ճշմարիտ հաւատացեալներուն (փոքրիկներուն) վրայ, այսինքն անոնց վրայ՝ որոնք իրենց անձնական արժանիքով ընդունակ են արդիւնաւորելու իրենց մէջ նախախնամական ամենաբովանդակ զօրութիւնը :

Աստուծոյ այս նախախնամական զօրութիւնը, ժամանակին ըմբռնումով, թանձրացած է պահապան հրեշտակներու մէջ :

Բ. Կորուսեալին գիւտը. — Փրկագործութեան խորհուրդն էր բարոյական բարձրագոյն կեանքի մը մէջ փոխադրել անոնք՝ որոնք ճշմարտութեան ճամբէն չեղած էին անգիտակցաբար. (Մտթ. ԺԸ, 11) : Երկնաւոր Հօր գթութեան նշանն էր մարդու որդւոյն միջոցաւ գտնել կորսուածը : Կորուստ մը, թէ իսկ ըլլայ այն ամենափոքր, աւելի մեծ ցաւ կը պատճառէ՝ որքան ուրախութիւն չառթեր չկորսուած ամենաթանկագին աւարկայ մը : Հետեւաբար և այդ կորուստին գիւտը ցնծութեամբ կը լեցնէ կորուսեալին տէրը, որ թէև այդ առարկային բազմապատիկն ունի իր մօտ : Այսպէս Աստուծոյ գթութիւնը չի թողուր որ կորսուի «մի ի փոքրկանցս յայտնանէ» : Պէտք է գիտնալ սակայն թէ կորուստէ զերծ մնալու անհրաժեշտ պայմանը փոքրկացումն է և ոչ թէ աստուածային գթութիւնը՝ որ աստիճանին հետեւանքն ու զայն վարձատրողն է միանգամայն :

Ղուկասու մէջ տարբեր առիթով մը ըսուած է կորուսեալ ոչխարին և դրամին առակը : Փարիսեցիները գայթակղած ըլլալով Յիսուսի ընթացքէն, ըստ որում նա «զմեղաւորս ընդունի և ուտէ ընդ նոսա», Յիսուս անոնց կ'ըսէ այս առակը, նպա-

տակ ունենալով հասկցնել թէ մեղաւորները շատ աւելի հոգածութեան և անոնց դարձը շատ աւելի հրճուանքի արժանի էին, քան անոնք՝ որոնք արդար են, կամ Փարիսեցիներուն նման ա՛յնպէս կը կարծեն ինքզինքնին :

Մտթ. -ի մէջ ցոյց կը տրուի Աստուծոյ նախախնամական հոգածութիւնը իր արարածներուն, և մասնաւորապէս հաւատացեալներուն (փոքրիկք) վրայ. իսկ Ղուկասու մէջ՝ Փրկչի պաշտօնը կորուսեալները գտնելու :

Գ. Մեծը երկնի քաղաւորութեան մէջ. — (Ղուկ. Թ. 46-48. — Հմտ. Մտթ. ԺԸ, 1-5. — Մրկ. Թ. 32-37). — Ըստ Մտթ. -ի աշակերաններն են որ կը մօտենան Յիսուսի հարցնելու համար թէ ո՛վ է իրենցմէ մեծը երկնի թագաւորութեան մէջ : Ըստ Մրկ. -ի աշակերանները դեռ Կաթաւնայում չեկած՝ ճամբուն վրայ իրարու հետ վէճի բռնուած էին թէ «ո՛վ մեծ իցէ», և Յիսուս, որ հաւանաբար անոնցմէ հեռու կը քալէր, կուսած էր վէճի նիւթ եղող խնդիրը : Ղուկասու մէջ իրեւ միջանկեալ դէպք մը պատմուած է այս :

Արժանիքը դիրքի և աստիճանի հետ կապ չունի բնաւ : Մեծութիւնը հոն է՝ ուր գործն ու զաղափարը կը գերադասուին անձէն. կամ՝ մեծը այն է, որ պաշտօնաւորութեան, անպայման և անչափադէտ անձնութիւններուն մէջ կը փնտռէ իրեն վարձատրութիւնն ու սրտի գոհունակութիւնը : Երկնի թագաւորութեան մէջ ո՛չ միայն մեծ ըլլալու՝ այլ նոյն իսկ մտնելու միակ և անհրաժեշտ պայմանն է ըլլալ «խրեւ զմանկտի» : Հոս բնականաբար մտնուկի տնձը չէ ինչքի առարկայ եղողը. վասնզի արժանիքը գիտակցութեան և ինքնաճանաչութեան մէջ և մանուկը այս յատկութիւններէն զուրկ ըլլալով՝ անտեղի է Յիսուսի խօսքերէն եզրակացնել թէ մարդկութիւնը մանկանալով՝ միայն պիտի կրնայ արքայութեան զաւակ ճանչցուի : Մանկութեան յատկանշական գիծերն են կամ կը նկատուին՝ անմեղութիւն, խոնարհութիւն և անձնութիւններուն . ահա այս առաքինութիւններն են՝ զորս Յիսուսի ա-

չակերտ մը պարտաւոր է զօրացնել իր մէջ գիտակցութեամբ և կիրարկել իր կեանքի բովանդակ ընթացքին մէջ: Երբ աւետարանի պաշտօնեան կը ճանչնայ իր կոչումին բարձրութիւնն ու պահանջները, երբ հաւատացեալը կը գիտնայ իր պարտականութեան չափն ու ծանրութիւնը, և երբ երկուքը մէկ կ'ըմբռնեն կեանքի ճշմարիտ խմաստը, որ համերաշխ գործակցութեան մը և բարոյական հպատակութեան մը վեհմ սկզբունքին մէջ ի յայտ կուգայ, ըստ ինքեան բարձրութիւնը պիտի տեսնեն հոն՝ ուր շուքն ու բարձր, պատիւն ու

աստիճանը կը խառնուին կեանքի ամէնէն խոնարհ պայմաններուն հետ: Ով որ կը գնահատէ այդպիսի առաքելութիւններով օժտուած անձ մը («մանուկ մի») Յիսուսի անունով՝ զՅիսուս գնահատած պիտի նշկատուի: Յիսուսի կեանքը, որ գերազանց օրինակն է խոնարհութեան և անձնազոհութեան, միակ հետապնդելի մատիպարը պէտք է ըլլայ իւրաքանչիւր ճշմարիտ քրիստոնէի, կամ՝ աւելի ճիշդ՝ իւրաքանչիւր ճշմարիտ մարդու:

ՄՅԵԼԻԶ.

Ս. ԳՐԱԿԱՆ

ՔԱՌԱՐԱՆ

Ս. ԳՐՈՑ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԲՈՅՍԵՐԸ

ԱՐՄԱԽՆԻ. — (Եկեց ԺԵ. 27) Եբր. Թանուր, Յուն. Փինիֆա (φωφίνα). Բ. Բ. Phoenix dactylifera (բուն արմաւենի):

Արմաւենին Պաղեստինի սովորական ծառն է. 30 ոտքէն մինչև 80 ոտք բարձրութեամբ պարզ, չիտակ բուն մ'ունի, որուն ծայրը 2—3 մետր երկայնութեամբ, փետրաւոր տերեւներէ թանձր պսակ մը կայ հովանոցաձև: Այս ծառին պտուղը, «արմաւ»ը, գազաթը խիտ տերեւներու տակ ծածկուած է ողկուղաձև. մէկ կոթի վրայ 200 հասի չափ արմաւ կ'ըլլայ, որոնց ծանրութիւնը հինգ քաջ կ'կշռէ: Արմաւը Պաղեստինի և Հիւսիսային Ասիոյի ժողովրդոց սովորական կերակուրն է. իսկ պտուղին կորիզը կակղեցնելով կամ փոշիացնելով ուղտերու և ձիերու կ'կերցնեն: Հնացած և անպտուղ ծառերէն արմաւօղի ըսուածը կ'հանուի. Եւրոպայի մէջ ալ սկսած են մշակել, բայց պտուղները չեն հասնիր:

Տերեւները «ոստ արմաւենեաց» անուամբ ծանօթ են:

Բունին կեղեք ողորկ չէ, այլ ունի դերբուկներ որք կը դիւրացնեն պտուղ քաղելու համար ծառին գազաթը ելլելը (Եբր. է. 7.8). այս դերբուկները հին տերեւներու տեղերն են: Արմաւենիի տերեւները կ'գործածուին իրր կղմնար, տուներու ասնիքները ծածկելու համար:

Արմաւենին անտառի մէջ կամ արգասաւոր հողի վրայ չի բուսնիր, այլ ընդհանրապէս անապատի աւաղներուն մէջ. բուսած տեղերը չոր ցամաք և ջերմ է. արմաւենիներու մօտ տեղերը ընդհանրապէս ջրարբի կ'ըլլան և ասոր համար ճամբորդը անապատին մէջ երբ հեռուէն արմաւենիներ տեսնէ, կ'կուահէ թէ ջրարբի տեղերու կ'մօտենայ: Պաղեստինի մէջ առատօրէն արմաւենի կ'բուսնի, մասնաւորապէս Երիքովի դաշտին մէջ, Յորդանանու հեղեղատին վրայ, Գալիլիոյ ծովուն չրճակայքը, Սիւքեմի ձորին մէջ և ծովեզերաց վրայ: Արմաւի մեծ վաճառականութիւն կ'ըլլայ Պէրսիոյ մէջ. Երուսաղէմի պարիսպէն ներս դեռ կը տեսնուին ցանցառ կերպով, աստ անդ արմաւենիներ. Նոյեմի օրերուն ևս Զիթենեաց լեռան վրայ արմաւենիներ կ'գտնուէին:

Պաղեստինի մէջ քանի քանի քաղաքներ արմաւենիի չատուկեան համար «Արմաւենեաց քաղաք» եւ կամ ասոր նման աւաններ առած են . այսպէս զոր օրինակ Երիքով արմաւենիի առատութեանը համար կոչուած է «Արմաւենեաց քաղաք» : Եւդադի (*) քաղաքը արմաւենիի ծառաստաններ ունենալուն ի հետեւն կոչուած է «Աաաան Թաւաւ» , որ կը նշանակէ «Արմաւենեաց երկիր» : «Բաադ Թաւաւ» աւանն քաղաքը կը նշանակէ «Տէր արմաւենեաց» . թերեւ Դերովրայի արմաւենիի տակ բնակած վայրը ըլլայ , որ կը գտնուի Բիթէլի եւ Ռամայի միջեւ (Դատ . Դ . 5) : «Բերանիա» կ'նշանակէ հաւանականաբար «Տուն արմաւենեաց» :

Արմաւենին իր գեղեցկութեամբ , ուղղաբերձ աճմամբ եւ տերեւայից հովանիով նշանաւոր ըլլալուն՝ շատ անգամ իբր վայելչութեան եւ գեղեցկութեան նշանակ՝ օրինակ կ'երբուր : Տերեւները ամէն դարու մէջ ուրախութեան եւ ցնծութեան նշանակ համարուած են . բնաւ չի թուիր եւ փառ չառներ : Իսրայէլացիք անոր ոտներէն տաղաւարահարաց տօնին տաղաւարներ (Եբր . Սուկիդա) կ'չինէին (Դեա . ԻԳ . 40—43) : Քրիստոսի Երուսաղէմ մտած օրը զիմաւորելու ելլող Երուսաղէմացիք Արմաւենեոյ ճիւղեր բռնած էին (Յովհ . ԺԲ . 13) , որ անշուշտ Զիթենեաց լեռան վրայ զանուած արմաւենիներէն բրցուած էին : Յովնան նէս Աւետարանիչ իր Յայտնութեան Գրքին մէջ կ'ըսէ՝ թէ երկնից մէջ փրկեալներու ձեռքը արմաւենիի ճիւղեր կան (Յայտ . Է . 9) որով ըսել կ'ուզէ թէ փրկեալներու ժառանգութիւն ուրախութիւն , ցնծութիւն է : Արմաւենին միշտ դէպի երկինք զիմով կանաչադեղ զլիսլին յարմար օրինակ է շնորհաց մէջ աճող հոգիին (Սաղմ . ԴԱ . 13) :

ԱՆՓՈՒՏ ՓԱՅՏ կամ ՍՍՏԻՄ . — (Ելից . ԻԶ . 15 . եւ . ԽԱ . 19 . եբր . յոգ . Սիսիմ [= sittim] եզակի Սիդդա [= sittah] Յուն . *φυβρον* աւիքրոն [= ξύλον ἄσηπτον] Բ . Բ . *acacia seyal* Տաւ . ափսիս :

Ս . Գրոց մէջ յիշատակուած «Ստաիմ»ը

(*) Մեռեալ Յովուն Արեւմեան եզերն է :

կամ «Անփուտ փայտը» բուն իսկ բուսաբանութեան *acacia seyal* ծառն է . Աքադիան Կարմիր ծով երկարող Սինա թերակղզիին վրայ առաւելապէս աճող ծանօթ ծառն է : Կը գտնուի նաեւ Յորդանանու հովտին հարաւային կողմերը , Մեռեալ ծովուն արեւմտեան կողմը , իւր տերեւները ուղտերը ախորժով կուտեն . եօթ կամ ութ զոյգ խիստ նուրբ երկայնաձև եւ փետրածէ տերեւներէ կը բաղկանան . իւր ծաղիկները դեղին գնդկաձև զլուխներով՝ կ'ըսցուին տերեւներու անուրիւրուն մօտ , եւ խիստ սուր երկուորեակ խայթոցներով զինուած են գնդաձև սերմերը երկայնաձև չոր պարկուճի (պատեանի) մը մէջ շարուած են համրիչի նման , եւ լուրիայի պատեանին պէս կ'ըսցուին : Այս աքադիան [= *acacia seyal*] կ'արտադրէ Արարական խէժը . [= *gummi arabicum*] . այս խէժը օգլին մէջ կարծրանալով բժշկութեան եւ արուեստներու մէջ բազմապիսի գործածութեան առարկայ կ'ըլլայ :

Այսօր խոշոր աքադիանները Սինա թերակղզիին վրայ ցանցաւորէն միայն կ'երևին . ինչու որ տեղացի *bédouin* ները կանուխէն դեռ նորաբոյս վիճակին մէջ , առանց թողնելու որ աճին , փայտածուխ չինելու համար կ'կտրեն : Ասոր փայտը , խիստ թեթեւ թխագոյն նարնջեան գոյնով շատ կարծր է եւ երկար ատեն կ'զիմանայ , ասով կը բացատրուի Եօթանամիցի «անփուտ փայտ» թարգմանութիւնը : Որքան ժամանակ անցնի այնքան դոյնը կ'թխանայ եւ երբ շատ սաքիներ անցնի , Երեսուէն աւելի կ'սենայ :

Հին Ափսիսեան Եգիպտոսի ամենէն աւելի ծանօթ եւ հասարակ ծառերէն մին էր . յաճախ կ'հանդիպինք «Սեւն» անունին Եգիպտական մեհենադրոջմ նշանագիրներու բնագիրներուն մէջ . այս «Սեւն»ը Աքադիան է . կ'թարգմանուի նաեւ «փուշ» , ինչպէս որ Խպտերէնի մէջ ալ «Սոնա» նոյն նշանակութիւնը ունի , եւ Եգիպտական աքադիայի յունական եւ լատինական անունն ներն ալ [= *'auanda* = *acanthus*] «սեւն» էն կամ «սեւն»էն ածանցուած ըլլան որոշ կ'երեւայ . միեւն այսօր Աքադիային Արտը-

ները կ'անուանեն «Սուռն» : Թեոփրաստ , իր բնագրամութեան Դ . 2 , 8 էջին մէջ կ'ըսէ , « ափանդան կամ ափախան » այս անունը կ'կրէ անոր համար որ ամէն կողմէն ի բայ առեալ իւր բունէն , փուշերով (= Յուն . աքանոտտիս) ծածկուած է , նոյն իսկ անրեները փշալից են » : Հին եգիպտացիք այս ծառին փայտը կը գործածէին նաւակներ շինելու : Հերոդոտոս՝ նմանապէս եւ յիշատակարանները կ'հաստատեն զայս եւ կ'շաւելուն թէ այս փայտէն կը շինուէին նաեւ ամէն տեսակ կահ կարասիներ եւ արձաններ :

Ս . Գրքին մէջ Աքատիան յիշատակուած է միայն այն մասերուն մէջ ուր կ'պատմուի Իսրայէլացւոց ելքն եգիպտոսէ . (Տեա . Ելից եւ Թուոց գիրքերը) թէ եւ Յսայ . ԽԱ . 19 համարին մէջ ալ յիշատակուած է , բայց աս համարին իմաստը կտակածելի է : Այս ծառը շատ սովորական եւ ծանօթ ըլլալով Սինայի մէջ , Իսրայէլացիք Սինա անապատին մէջ բնակած ատենին միայն կըրցան ճանչնայ : Պաղեստինի մէջ չէին կրնար ճանչցած ըլլալ , քանի որ բացի Յորդանանու չրճակայքէն՝ Պաղեստինի ուրիշ ոչ մէկ կողմը կ'երեւէր : Երբ Սողոմոն Երուսաղէմի Տաճարը շինեց , սրբազան տեղերու զարդերու եւ կահաւորման համար « Մայրի փայտ » գործածեց . այս « Մայրի փայտ » ը Լիբանոսի լեռներէ կ'ըրեւէր , մինչդեռ Մովսէս Սինայի մէջ տապանակը շինած տանին իր ձեռքին տակ « Մայրի փայտ » չգտնելուն՝ « Սնոփուտ փայտէն , այսինքն « աքատիա » ի փայտէն շինեց . թէ եւ Սինայի թերակղզիին վրայ արմաւենիներ եւ մուրշավայրիներ ալ կ'գտնուէին , բայց չէր կրնար զործածուիլ Տիրով տան շինութեան , եւ ոչ իսկ սրբազան կահաւորման . այս տեսակ ծառերու փայտերը երբեք չեն յարմարիր այսպիսի շինութեանց . մինչդեռ « սնոփուտ փայտը » , Աքատիան , այս եւ այսպիսի շինութեանց շատ յարմար եւ յարգի էր : Ձեռունի տախտակաւած ընկու խիստ յարմար էր իր թեթեւութեան համար . Իսրայէլացւոց ճակատագիրը , որ տեղէ տեղ թափաւ իւր ու ճամբորդել էր , անհրաժեշտ էր որ իրենց հետ փոխադրած սրբազան

զարդերը եւ բոլոր կահերը թեթեւ եւ դիւրատար ըլլային . եւ աքատիայի փայտէն աւելի թեթեւ ու տոկուն յարմար փայտ չպիտի կրնային գտնել սոյն շինութեանց համար :

Ս . Գրքէն կուսանինք թէ Մովսէս ի գործ դնելէ յետոյ այն ամէն ինչ որ անհրաժեշտ էր Աստուծոյ պաշտաման , խօսքը ուղղելով Իսայէլի սրբւոյ յանձնարարեց ի մէջ այլոց Վկայութեան խորանին շինութեան համար ինչպէս նաեւ սրբազան անօթներու եւ իրեղէններու համար տալ աւսիս փայտէն (Ելից . ԻԵ . 5 , ԼԵ . 7 . 24) զոր կրնային գտնել նոյնիոկ անապատին մէջ : Այս փայտէն շինուեցաւ Տապանակ ուխտին (Ելից . ԻԵ . 10 , ԼԵ . 1 , Թուոց Ժ . 3) : Առաջաւորաց հացի սեղանը (Ելից . ԻԵ . 23 , ԼԵ . 10 ,) Զոհի Սեղանը (Ելից . ԻԵ . 1 , ԼԵ . 1 .) , Խուռնկի Սեղանը (Ելից Լ . 1 , ԼԵ . 25) , Խորանին խարխիսի տախտակները (Ելից ԻԶ . 15 , ԼԶ . 20) Խորանին սիւները (Ելից ԻԶ . 32 , 37 . ԼԶ . 36) , եւ վերջապէս Սրբազան իրեղէններու եւ կահերու փոխադրութեան ձողերն (Ելից ԻԵ . 13 , 28 , ԻԶ . 26 , ԻԷ . 6 , Լ . 5 , ԼԶ . 31 , ԼԷ . 4 . 15 . 28 , ԼԸ . 6) : Բոլոր այս բաներն ու իրեղէններն շինուեցան Բեսելիէլ ճարտարապետին հրահրութեան ներքեւ եւ ծածկուեցան ոսկեայ թերթերով :

Ելից եւ Թուոց բոլոր համարներուն մէջ զոր վերեւ յիշատակեցինք՝ Աքատիա ծառին անունը միշտ յոգնակի ձեւով (աիսիս) յիշատակուած է Երրորդական բնագրին մէջ : Յսայի ԽԱ . 19 համարին մէջ այս ծառին անունը եզակի ձեւով (աիսսան) կը կարդանք Երրորդական բնագրին մէջ . այս եզակի ձեւին մէկ անգամ կը հանդիպինք Ս . Գրոց մէջ : Գիտնական մեկնիչներ կը խորհին որ Յսայի ԽԱ . 19 համարին մէջ յիշատակուած բառը Աքատիա չի նշանակեր , ինչու որ Յսայի յիշեալ համարին մէջ կը յիշատակէ այն ծառերն որոնք բարեկեր եւ հարուստ վայրերէ կուգան , մինչ Աքատիան անմշակ վայրերու ծառ է եւ չի յարմարիր որ այդ ծառերու կարգին մէջ յիշատակուի :

Հին Թարգմանիչը և մեկնարանք չեն ճանչցած Սիսսիս կամ Սիսսան ծառ . անշուշտ իրենց բնական երկրին մէջ չգտած կամ չտեսած ըլլալուն . Եսայիի ԽԱ . 19 համարին մէջ յիշատակուած սիսսանը յունարէնի մէջ Թարգմանուած է «տոսախ» և Լատինականին մէջ ալ «փշենի» : Ս . Հերոնիմոս կ'երեւի իսկապէս ճանչցած և տեսած է այս ծառը , բայց յատկանշող Լատինական անունը չէ գտած . իր մեկնաբանութեան մէջ կ'գրէ . «Եբրայական սիսսանը տեսակ մը ծառ է որ կ'աճի անապատին մէջ և կ'նմանի սրափուշին [spina alba] . ասոր փայտովն էր որ շինուեցաւ սապանակը և վկայութեան խորանի ամէն կաները . փայտը խիտ թերթեւ անփուռ է : Այս ծառը չի բուսնիր մշակեալ տեղեր , և Հռովմէական կայսրութեան երկիրներուն մէջ չկայ , այլմիայն Աբարիոյ անապատներուն մէջ կ'գտնուի» :

Ելից և Դատաւորաց ժամանակ Աքապիս շատ գտնուած տեղերը «սիսիս» (աքապիս) անունով ճանչցուած են , այսպէս զոր օր . Մեռեալ ծովուն հիւսիսային արեւելեան կողմը ուր Իսրայէլացիք խոստացեալ երկիրը մանկէ տաջ բնակեցան , կոչուեցաւ «Աքեշ - հաս - սիսիս» կամ պարզապէս «սիսիս» (Թուոյ ԼԳ . 49) որ կ'Թարգմանուի «սրբոտալայր աքապիսներու» : Ենկաղզիի մէջ և Մեռեալ ծովու հարաւ արեւմտեան կողմը մինչև ցայժմ տեսած է բողմութիւ աքապիսներ [TRISTRAM . The land of Israel' , 1865 . էջ 524 :

Միքիէ մարգարէն (Ձ . 5) կ'յիշատակէ վայր մը «սիսիսիս» անուամբ . հաւանականաբար Աքեշ - հաս - սիսիսն է : Յովէլ Դ . 18 (Եբր .) «սիսիսիս» կամ «Նահալ - հաս - սիսիս» անուամբ հովիտի մը վրայ կը խօսի , բայց անորոշ կ'մնայ տեղը , կ'երեւի հովիտը ունէր բողմութիւ աքապիս ծառեր : Դատաւորաց զբօսն (Է . 23) մէջ կ'ճանչնանք յայտնի Յորդանանու «Բեթ - հաս - սիսիս» (= Բեթսաիդա) անուամբ քաղաք մը որ կ'նշանակէ «տուն աքապիսից» :

ԱՆՇԻՆԴԻԿԻ կամ ԱՓՍԻՆԴԻ . — (Բ . Օր . ԻԹ . 18 , Ամով 2 . 13 , Յայտ . Ը . 10 , 11)

Եբր . [շա'անա'ի ևֆ'անա'ի] Յուն . արիսիսիս [ἄρσις] . Բ . Բ . [Artemisia romana . Artemisia judaica . Artemisia Abrotonum] ՏՃ . քիլիս օրո :

Երկայնակեաց արմատով , խոտեղէն սունկ մըն է , որ իրեն անհամար տեսակները ունի . խոտակերպ ցօղունը առ հասարակ մէկ մեթր բարձրութիւն կ'ունենայ . փեր տերեւները խիտ կալաւորուած են և արծաթագօծ կանաչութիւն մ'ունին . ցօղունը կ'վերջաւորի փոքրիկ դեղին ծաղիկներու նուազ խիտ ողկոյղով մը . կը բուսնի լեռնային ու անմշակ վայրերու մէջ . Թափանցող , կծու հոտ մ'ունի և խիտ համեմատ , ճաշակը խիտ դառն է :

Եբրայեցիները «շա' անա'ի» հասարակ անունին տակ կ'ճանչնան Պաղէստինի մէջ ինքնարոյս աճող աւշինդրի բոքր սարբեր տեսակները : Աւշինդրի եօթը տեսակներ կան որոց գլխաւոր տեսակներն երեք են :

1. — Artemisia romana , Հասել Գուիստ [Hasselquist] գտաւ Թափօր լեռան վրայ : Փիւնիկէի , Տիւրոսի կողմերը առատօրէն կ'բուսնի . ասիկա հասարակ սիսիսն է :

2. — Artemisia judaica , որ առաջինէն աւելի դառն է , և խիտ առատօրէն կ'գտնուի Աբարիոյ , Եգիպտոսի , Յուդայի երկրին մէջ և մասնաւորապէս Բեթզեհէմի շրջակայքը : Արեւելքի մէջ իւր տերեւները և իւր հատիկները իբր կորովիչ , սոսմաքսային և սրտահալած դեղ կ'գործածուի :

3. — Artemisia Abrotonum . որ միջին Եւրոպայի մէջ կ'աճի . կ'գտնուի Պաղէստինի մէջ և մինչև դէպի Չինաստան կ'հանդիպուի . աւելի առք երկիրներու մէջ բնակահարող իբր Թուրքի միայն կ'գտնուի : Աւշինդրի ամէն տեսակներն ալ իրենց վրայ յատկանշական դառնութիւն մը ունին և այնքան խիտ է այդ դառնութիւնը որ առակի կարգանցած է : Ս . Գրոց մէջ որ և է դառնութիւն մը յիշատակելու առթիւ աւելի շեշտուած ըլլալու համար դառնութեան բնութիւնը , աշխնորը կը յիշատակուի : — Սողոմոնի Առակաց Ե . 4 . համարին մէջ միզրի քաղցրութեան հակընդդէմ աշխնորը կը յիշատակուի : — Երեմիայի Թ . 15 , Ողբ . Գ . 15 19 . համարներուն մէջ «ջամբել աւշինդր»

կ'նշանակէ խիստ պատժոյ ենթարկել :— Ամովս մարգարէն . Ե . 7 , 2 . 13 (12) կ'ըսէ թէ անօրէն ու անիրաւ դատաւորները արդարութիւնը աշխնորի կը փոխեն : «Որ չըջէքդ զդատատան յաւնիդը և զարգարութիւն ընկենուք յերկիր» : «Զի խոտորիցէք զիրաւունս ի դատութիւն և ըզպատու արդարութեան յաշինդը» :— Երկրորդումն Օրինացը (ԻԹ . 18 .) Աստուծմէ խոտորած և կուռքերու ծառայողները կը բաղդատէ արմատի մը հետ , որ կ'ընծիւղէ աւշինդը և դատութիւն :— Խորհրդաւոր աստղ մը Յայտնութեան գրքին մէջ (Է . 11) աշխնոր անունը կ'կրէ , վասնզի այս տունկին դատութիւնը ունէր , այդ աստղը ինկաւ երկինքէն ջուրերու և աղբիւրներու երրորդ մասին մէջ և ջուրերը այնպէս մը դառնացուց որ անկէ խմող մարդիկը մեռան : Մեկնիչները ասարակարծիք են այս խորհրդաւոր աստղին իմաստին մասին . բայտ ումնց այդ աստղը կ'նշանակէ Հերէսիկուսայէս , բայտ այլոց Զորայէս մը ու մեծ աւերներ պիտի գործէր :—

ՇՈՒՇԱՆ .— (Գ . Թագ . Է . 26 . Երգ . Բ . 16 . Զ . 2 . 3 .) Եբր . սուսան [= s ūsan] . Յուն . *φίλιον* [= *φιλών*] . Բ . Բ . *lilium chalcedonicum* (= քաղկեդոնեան շուշան) , *lilium martagon* (= լեւնաշուշան) *lilium candidum* (այլտակ շուշան) :

Շուշանը տեւական տունկ մըն է , սոխաբմատ ունի , տերեւները պարզ և բոլորեզր են , իսկ ծաղիկները շատ գեղեցիկ են . ծաղիկները վեցթիւթեան կամ վեցճեղքեան են , բարեխառն և տաք կլիմայի յատուկ տունկ մըն է՝ Միջերկրական ծովին բոլորտիքը շատ առատ է :

Պաղեստինի մէջ շուշանի զանազան տեսակներ կան . Գաղիէրոնական շուշանը Պաղեստինի մէջ ամենէն ծանօթ շուշանն է . Սպիտակ շուշանը ունի սպիտակ ու սիրուն ծաղիկներ որ հին ասուէնէն ի վեր իբրեւ անմեղութեան և մաքրութեան նշանակ համարուած է , հաւր խիստ աստիճական է :

Լեւնաշուշանը կարմիր մանիշակազոյն ծաղիկներ ունի , ծաղկապատեանը կէսէն սկսեալ դէպի ետե դարձած է և վրան մուրճաձիւր բիծեր ունի :

Պաղեստինի այս պէսպէս շուշաններու աւատութիւնը , գեղեցկութիւնը և աշուշանտութիւնը ճանապարհորդներուն բերկրութիւն կ'պատճառեն :

Ս . Դրոց մէջ յիշուած շուշանին համար զանազան կարծիքներ կան՝ ոմանք կ'ուզեն բուն իսկ սպիտակ շուշանը նկատել , այլք քաղկեդոնական շուշանը որ Պաղեստինի մէջ սովորականն է , բայց Եբր . «սուսան» բառը արդի արաբական «սուսան» բառին նման բնդհանրական անունն է շուշանին և իր մէջ կ'ըսվանդակէ բոլոր շուշանի տեսակները :

Երգ Երգացի մէջ շուշանը կը գործածուի յաճախ իբր նշան սիրելիի . Փեսին չրթները կ'նմանցունին շուշաններու (Ե . 13) : Տէրն մեր շուշանէն կ'առնէ իւր գեղեցիկ նմանութիւններէն մին և Սողոմոնի հանդերձներուն ազնուութիւնը , գեղեցկութիւնը և փառքը չի հաւասարեցներ շուշանի գերբնաիր գեղեցկութեան և զարդին , «Նայեցէք դաշտի շուշաններուն՝ ինչպէս կ'աճին ... Սողոմոն ալ իւր բոլոր փառաւորութեան մէջ անոնցմէ մէկուն պէս հազուադէպ» (Մատթ . Զ 28) : Տէրն մեր այս խօսքը արտասանած ասան կ'զտնուէր Տիրերական ծովուն եզերքը բարձրացող հիմնալի բլուրներէն միոյն հաւանականաբար Քուրն հասջիլ բլուրին վրայ , որուն վրայ անշուշաշուշաններ աճած և իրենց գեղեցկութեամբ բերկրութիւն կ'պատճառէին տեսողներու :

Սողոմոնի Տաճարին սրահի մէջի սիւններուն գլուխները եղող խոյակները շուշանաճեւ զարդեր էին , ինչպէս և Տաճարին ձուլածոյ աւազանին չրթունքներուն վրայ շուշանի ծաղիկներ շինուած էին (Գ . Թագ . Է . 19-26 . Ե . Մնաց . Գ . 5) :

ԽՆՏՈՐ կամ ՍԽՏՈՐ .— Եբրայեց . *շուս* [= *shoom*] Յուն . *ρω' σφοδρα* [= *τα σφοδρα*] , Վուլկաթ . *ալլիա* [= *allia*] , Բ . Բ . *allium sativum* (= հասարակ խւսոր կամ սխոր) :—

Սխորը կ'մշակուի ամէն տեղ և ամէն ժամանակ , ստիկայ խոտային աստարմատ ունեցող տունկ մըն է , յալկնթազիներու տեսակէն և շուշանազգիներուն ընտանիքէն է . (*allium sativum*)

ցողուն մ'ունի զբերթէ երեսուն հարիւրու-
մեթը: Լայն ու երկայն սրածայր սեւ եւ-
ները ցողունին վարի կէտին վրայ կ'ըսու-
նին, ցողունը կ'վերջանայ մութ, սպիտակ
ծաղիկներու փունջով մը որուն մէջ սփռիկ-
ներ կ'գտնուին. արմատը, որ ուտելու
միակ մասն է, հաւկիթի ձեւ մ'ունի,
կաղմուած է սպիտակ կամ կարմրոտակ,
նորը պատեաններու մէջ ամփոփուած
փոքրիկ կոճղէշներով:

Սխտորը առաւելապէս կ'մշակուի Ե-
զիպտոս, միջին Եւրոպա՝ շատ յարգի է
կերակրոց համար եւ շատ կ'սպառի մա-
նուածդ տաք երկիրներու մէջ իբր համե-
մանք կերակրոց. իւր Եբբ. անունը շռա՛
կ'երեւի իւր հոտէն առնուած է: Կ'կար-
ծուի Լատիններէն ու Փրանսերէն անունները
Կիզասական օձ արմատէն ամանցուած են,
որ կը նշանակէ այրող, կիզիչ, իւր խիստ
կծու համ ու հոս մ'ունենալուն: Եզիպ-
տականին կծուութիւնը աւելի՛ նուազ է
քան միւր երկիրներունը. զրգօրիչ ազդե-
ցութիւն մ'ունի եւ սխտրմակը կ'արէ. Ա-
րեւելքի մէջ եւ մասնաւորապէս Պաղեստինի
մէջ ամենէն աւելի հասարակ եւ ծանօթը այն
է որ մենք կ'անուանենք Ասկազոնեան
սխտր (=արփաճըգ սոյան) *allium asca-*
lonicum. Ասկազոնեան սխտրը խաշակրաց
ասկն Ասկազոնէն Եւրոպա բերուած եւ
հոն մշակուած է. իւր ճաշակէն դատելով
քիչ տարբերութիւն կը դրուի սոխին եւ
սխտրին մէջ:

Սխտրը Ս. Գրքին մէջ միանգամ յիշա-
ատակուած է Եզիպտոսի արտադրու-
թեանց մէջ (Թիւ. ԺԱ. 5). Սխտրը յիշուած
է վարունգին, սեխին, պղտփին եւ սոխին
հետ. այս թուարկութեան մէջ վերջին
տեղը կ'գրաւէ սխտրը: Թշուառ ու պար-
տասեալ Իսրայէլացիները Սինայի անա-
պատին մէջ մանանայէն զատ ուրիշ անունդ
չգտնելով տրանջալ ակտան, կ'ուզէին միւ
ուտել, ինչպէս ձուկ, զոր Նեղոսի հովտին
մէջ առատօրէն կրնային գտնել եւ վայելել,
կ'փնտռէին նաեւ սոխն ու սխտրը իբր
զովարար անդրեղէններ, որոնք պատուա-
կան համարուած էին տաք երկիրներու մէջ
աղւաթին, սեխին եւ վարունգին նման:

Հեթանոս հեղինակներէն կ'ուսանինք թէ
սխտրը թէպէտեւ նուազ անդարար, բայց
հին Եզիպտացեաց համար անունդի տեղ կը
ծառայէր: Հերոդոտոս կ'յիշատակէ զայն
Քէօպսի բուրգը շինող գործաւորներուն
տրուած կերակուրներուն մէջ: Յունական
եւ Հռովմէական զինուորները եւ Իսպանական
ու Ափրիկեան նաւաւարները եւ ժողովուրդ-
ները շատ կ'սպառէին անկէ, ինչպէս կ'ուի-
նարկէն Վիրգիլիոս եւ Պլինիոս. մինչեւ
հիմակ Արեւելքի մէջ այսպէս է: Եզիպտոսի
եւ Սուրիոյ բնիկները սխտրը պզտիկ մա-
սերու բաժնելով քացախի մէջ կ'խառնեն եւ
կ'ուտեն, ամենայն հաւանականութեամբ
սխտր խառնուած էր այն քացախին մէջ
զոր Բոսս իր հնձող գործաւորներուն կ'ու-
տար (Հռութ. Բ. 14) իբր զովարար եւ անըն-
դարար կերակուր: Սա ստոյգ է որ մինչեւ
ցայսօր տակաւին սխտրով քացախը իբր
կերակուր կ'գործածուի Պաղեստինի մէջ
մանաւանդ այն գործաւոր զտակարգերուն
մէջ որոնք արտերուն մէջ հողագործու-
թեամբ կամ չէնքերու շինութեամբ կ'զբա-
ղին:

Այն երկիրներուն մէջ ուր Սեմուն կոչուած
հողմը կ'փչէ՝ հոն սխտրին առաւելութիւնը
աւելի չեշտուած է: Եւրիկոթոն կ'ըսէ թէ
«Տեղացին երբ դուրս պիտի ելնէ տունէն,
սխտր կ'ուտէ եւ քիթն ու բերանը լու մը
կ'ճմռէ անով, որպէսզի Սեմուն կոչուած
օդը չ'չնչէ», [An account of the kingdom
of cambul. Londres. 1815. էջ 140]:

ԿԱՂԱՄԱՆԻ. — ԾՆՆՂ. 1. 37. Ովս. Դ. 13
Եբբ. լիպնեհ [=libneh], Յուն. *ασί-
ρα* [= *σισα*]. Բ. Բ. *populus alba*,
populus euphratica. Լայն:

Կաղամախները ուռնիններու հետ կը
կազմեն ուռնեացիներու ամբողջական
ընտանիք. Կաղամախին իրեն արուն ու էգն
ունի. արուն եւ էգին մէջեւ խիստ աննշան
է տարբերութիւնը. ուստի ժողովուրդը
տարբեր անուններով կ'զանազանէ արուն
էգէն եւ իբր զանազան տեսակներ կը
ճանչնայ, մինչդեռ միեւնոյն կաղամախի
տեսակն է: Ստոյգ է որ կաղամախի տ-
րու տեսակը իր շուտափոյթ աճման, իր
ցողուններուն եւ բունին բարձրութեան,

զարնան իր տերեւներով աւելի կանուխ
տերեւալուն և աչնան աւելի ուշ տերեւ-
ները թափուելուն պատճառաւ աւելի տա-
րածուած և աւելի ծանօթ է ամէն կողմ և
իր այս սուաւեւրութեանց համար ծառու-
ղիններու համար ամենէն յարմար զարդի
ծառն է եղած: — Պաղեստինի կաղամախինե-
րու տեսակները երեք խումբի կ'ըստնուին:

1. — *Populus alba* (= Սպիտակ կաղամա-
խի) . — Ամենէն ծանօթ և սովորական ծառն
է Սուրբոյ ծովեզերեայ դաշտին ամբողջ
երկայնութեան վրայ, լայն ու տարածեալ
զաղաթով գեղեցիկ ու բարձր ծառ մըն է,
շատ դիւրաւ կ'ճանչցուի տերեւներուն
տակի կողմը եղած ձիւնի պէս ձերմակ
մաղմղուկներով որով տերեւները բոլորովին
ձերմակ կ'երեւին: Այս սպիտակ կաղա-
մախի խումբին կ'պատկանի նաեւ *populus*
tremula (= դողողուն կաղամախի) որ Պա-
ղեստինի լեռնային և հիւսիսային կողմերը
աւելի կ'աճի, երկայն ու տափակ կոթուն-
ներով, սուր ակունքներով տերեւներ ունի,
ամենաթեթեւ հովի աստն ալ կ'սկսին այս
տերեւները դողդաղալ, ասկէ առած է իւր
անունը. տերեւները երկու կողմով կանաչ
են, անառաւներու և դաշտատաններու մէջ
շատ հասարակ է, նաեւ ճամբաներու քովերն
ալ կ'տնկեն:

2. — *Populus Euphratica* (= Միջագետքի
կամ Եփրատեան կաղամախի) . — Սպիտակ կա-
ղամախի կ'նմանի, իր բարձրութեամբ ու
տաշածութեամբ, բայց չունի տերեւներուն
տակի կողմը ձիւնի պէս սպիտակ մաղմղուկ-
ներ. այս ծառը հիւսիսային Ափրիկէէն
սկսեալ մինչեւ Հիւսիսային լեռնային կողմերը
առատօրէն կ'աճի, և մանաւանդ մասնա-
ւորաբար Յորդանանու հովտին և Ասորոց
Միջագետքի մէջ, և վերջին տեղւոյն
անուամբ կոչուած է Միջագետքի կամ Եփ-
րատեան կաղամախի:

3. — *Populus nigra* (= Սեւ կաղամա-
խի) . — 24-30 մետր բարձր կ'ըլլայ, բուրգի
ձեւով և թխազոյն տերեւներով, ամենէն
աւելի կ'տեսնուի Լիբանանու հովիտներուն
մէջ, ինչպէս նաեւ միջին Եւրոպայի մէջ:
Ասիկա կ'նմանի *populus pyramidalis* (=
բրգաձեւ կամ Իսպախիս կաղամախի)ին:

Ոստերն իրարմէ չատ բայց կ'կենան ուստի
և գաղաթն աւելի տարածուած կ'երեւայ:

Ս. Գրքի Եբրայական բնագրին մէջ յիշ-
ուած Լիպնէ բառին իմաստին վրայ նախ-
նի և աբղի մեկնարանք միմեանց տարա-
կարծիք են. որմանք Լիպնէն կ'ուզեն
նոյնացնել բնագրի մէջ յիշատակուած
Usharufu [*Styrax officinalis*] հետ. այլք
Սպիտակ կաղամախի [*populus alba*] հետ.
ստուգաբանութիւնը չէ կրցած որոշ եզրա-
կացութեան մը գալ: Երբ. յիպնէն շաղան
արմատէն ածանցուած է և կը նշանակէ
«սպիտակ»: Լիպնէն կրնայ թարգմանուիլ
թէ *usharufu* (չեր. տաճ. լէպնի). և թէ
կաղամախի. քանի որ երկուքն ալ իրենց
սպիտակ յատկութեամբ կ'յարմարին Լիպ-
նէի թարգմանութիւնն ըլլալու:

Ինչպէս Ստիւրաքը նմանապէս և
կաղամախին սպիտակ յատկութեամբ նշա-
նակիլ են. Ստիւրաքս ծառը կաթնային
սպիտակութեամբ հեղուկ մը կ'արտադրէ,
ուրիշ Սալիսն անուամբ խէժը կամ ուշտի-
նը կը պատրաստուի: Այս սպիտակ ուշտի-
նը իր անունը սեփականացուցեր է ծառին.
ինչո՞ւն որ Աբարիոյ մէջ Լոպնան կ'նշանա-
կէ թէ' ծառը և թէ' արտադրածը: Նմանա-
պէս և սպիտակ կաղամախին [*populus*
alba] իր նորաբողբոյց ցօղուններուն և տե-
րեւներուն տակի կողմը եղած ձիւնի պէս
սպիտակութեամբն աչքառու ըլլալով, իր
այս յատկութիւնն անունը եղած է ծառին:

Աբղի մեկնաբաններէն Կեռնիոս, Միլոս-
յէլիս, Բօզէն Միլլըր կ'նշանակեն թարգ-
մանին Ստիւրաքս, իսկ Կեռնիոս, Թրիսդ-
բամ յարմար կը դասեն թարգմանիլ սպի-
տակ կաղամախի:

Ծննդոց Լ. 37 համարին մէջ Երբ. Լիպ-
նէն չեր (Ստիւրաքս) թարգմանուած է,
բայց աւելի ճիշդ կրնայ թարգմանուիլ
կաղամախի (Միջագետքի կաղամախի —
populus euphratica), ինչու որ Ծննդոց այդ
համարին ակնարկած վայրը Ասորոց Մի-
ջագետքի վայրն (Փատան Արամն) է և այդ
վայրին մէջ Լիպնէն ուրիշ բան չէ. բայց
կրնէ *populus euphratica*, Միջագետքի կա-
ղամախին: Իսկ Ուլսէի Դ. 13 համարին
մէջ յիշատակուած Երբ. Լեպնէնը (Կաղա-

մախի) պէտք է հասկնալ Սպիտակ կաղա-
մախի [populus alba] . չէ կարելի հաս կնալ
ուրիշ տեսակ կաղամախի . այս համարին
մէջ Ուլմէ կ'յիշէ յատկապէս ծառին հովա-
նին հաճելիութիւնը և այս սուսեղուն-
թիւնն աւելի սպիտակ կաղամախի ին վրայ
կ'երեւին քան ուրիշ և և է կաղամախի
վրայ :

ԳԱՐԻ : = (Հռուք Ա . 22 . Դաս . է .
13) . Եբր . *akō'raim* . Յուն . *Κριθός* (κριθός) .
Բ . Բ . *Hordeum districhum* (երկշար գա-
րի) և այլ տեսակները :

Գարին վաղածանօթ և հանրածանօթ
արմատք մըն է : ունի այլ և այլ տեսակ ,
որք ամէն կողմ կ'մշակուին . գլխաւոր-
ներն են [hordeum districhum] (երկշար գա-
րի) [hordeum tetrastichum] (քառաշար գա-
րի) , և [Hordeum hexastichum] (վեցաշար
գարի) : Այս գարիներուն վայրի տեսակը
անծանօթ կը մնայ բուսաբանական աշ-
խարհին մէջ : Բայց Պաղեստինի մէջ գա-
րին տեսակներուն մէջ տեսակ մը կայ , որ
ամենայն հաւանականութեամբ կ'կարծուի
թէ անիկա եղած ըլլայ բուն իսկ սկզբնա-
կան գարին , ուրիշ այսօրուան գարիներու
տեսակները սերած ըլլան . ասիկա կան-
ուանուի *Hordeum ithabureense* կամ *Hor-*
deum spontaneum (ինքնարոյս գորի) . որ
սուստորէն կ'բուսնի Գալիլայ մէջ գլխա-
ւորաբար Մերժ Աեհուն գաւառին և Սու-
րիական անապատին , այն է Բալմիրայի և
Համաթի միջև : Այս ինքնարոյս գարին
կ'տարբերի բոլորովին երկշար գարիէն .
չատ ցած կ'բուսնի , հասկերն ու հա-
տիկները փոքր են և սակայն քիստերը
խիստ երկայն են :

Գարին կ'մշակուի Պաղեստինի ամէն
կողմերը , գլխաւորաբար ձիւրու (Ա . Թագ .
Դ . 28) և էշերու համար : Վարսակը ան-
ծանօթ է Պաղեստինի մէջ : Եւրոպայի և
Ամերիկայի մէջ վարսակի տեղ կ'բռնէ գա-
րին , ինչպէս որ գարիի և ցորենի յարգերը
չոր խոտի տեղ կ'բռնեն :

Գարին ցորենի տեղ հացի համար կ'գոր-
ծածեն աղքատները , ինչպէս հիմա նմանա-
պէս և հին ժամանակներու մէջ (Դատ . է .
13 . Դ . Թագ . Դ . 42 Յովն . 2 . 9 . 13 ,

Եզեկ . Դ . 12) : Հրեայք հաց չինելու հա-
մար շատ անգամ ցորենին հետ ուրիշ ա-
ժան արմտիքներու ընդեղէններ կ'խառ-
նէին (Եզեկ . Դ . 9) : Եթէ մէկը ուզէր իր
աղքատութեան ծայրայեղութիւնն ցու-
ցնել , կ'ըսէր . «գարեղէն հաց իսկ չունիմ
ուսելու» : Ս . Գրոց մէջ կ'կարգանք որ
գարեղէն ալիւրն նախանձաւորութեան ըն-
ծան էր (Թիւ . Ե . 15) . Ժողովրդեան կող-
մէ Սուս Մարգարէութիւններու յաակացուած
վարձքի նիւթն էր գարին (Եզեկ . ԺԳ .
19) : Գարին նշանակը եղաւ Գեղէնի ցե-
ղին թշուառութեան և անկման : Գեղէնի
հետ խօսող մարդն իր երազին մէջ տեսած
էր որ «գարեղէն նկանակ»ով մը կործա-
նեցաւ Մաղիամու բանակը (Դատ . է . 13) :

Յորդանանու հովտին ամբողջ ընդար-
ձակութեան մէջ Ապրիլին կ'ըլլայ գարին
հունձքը , աւելի բարձր լեռանց (մինչև
6500 ոտք բարձր) և բլուրներու վրայ իսկ
գարի ցանուած ըլլալով , անոնց հունձքը
աւելի ուշ կ'ըլլայ , այսինքն Յուլիոյն և
Օգոստոսին :

Հաւանականաբար գարիի հունձքի ժա-
մանակն էր երբ Իսրայէլացիները Յետու-
օրով Յորդանանէն անցան (Յեա . Դ . 15) :
Գարիի հունձքէն վերջը կ'ըլլար ցորենի
հունձքը : Գարիի հունձքին ժամանակը
ծանօթ ժամանակամիջոց մըն է Հրէից
(Հռութ Ա . 22 . Բ . Թագ . ԻԱ . 9 . 10) .
այդ ժամանակը կ'փոփոխի անտարակոյս
ծովի մակերեսէն քանի բարձրանայ դիրքը
դաշտերուն և բլուրներուն : Պաղեստինի
և Սուրիոյ մէջ գարին կ'ցանեն Հոկտեմ-
բերին և Նոյեմբերին . և գարնան այսինքն
Ջաակին հնձումը տեղի կ'ունենայ :

(Շարունակելի)

ՂԵՒՈՆԴ . Մ . Վ . ԴՈՒՐԵԱՆ

ԿՐՕՆԱ-ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ

1 — ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՆԱՐԵՆ

ԱՇԽԱՐՀԱՐ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Գ. ԼՅԸ. ՄԻՄԻԿԱՆԻ

Իրական ու բնական ներշնչումները, որ անկեղծ, անբիծ ու զգայուն հոգիներու յատուկ են, դարերու ընդմէջէն կ'անցնին աննուաղ և յարաճուն կենսունակութեամբ մը և չփուլելով նոյնքան դիւրագգած, դիւրահաղորդ և համակրելի սրտերու հետ՝ զանոնք ևս կը մագնիսացնեն, կը թովեն ու կը գինովցնեն հոգեպաշտիկ սուրբ հաճոյքներու արջուղովով :

Վաստակաւոր սիրտ՝ Վանայ ծովին մէկ անկիւնը պլուած Նարեկի «մեծափառ և բարձրապատիւ ուխտի» արևնայնորէ վանականին, հոգեզմայրական բնութեան մը ծոցին մէջ աստուածալինով համազրաւուած ու ներանձնացած թշուառ մարդկութեան հոգեխօս ողբերգակին վսեմ ներշնչումով մ'օծուն խօսքերը, որոնք տառնեակ մը երկար դարեր հոգեպարար անունգով մը ջութեցին սեռն բարեպաշտութեամբ կըրթուած հայ քրիստոնէութիւնը, ապրեցող հոգիով մ'են կենդանացած : Բայց այդ կեանքը, մաքուր ու ցաւատանջ հոգի մը պերճ արտայայտութիւն, և մայրենի սրբազան լեզուի մը մէջ խորհրդաւոր խրթնութեամբ մը խորատուղուած, մեռած տառ մը՝ սպաննող գիր մը եղած է դժբախտաբար դարուս հայ զաւակներէն մեծամասնութեան համար . ինչպէս այդ խորհրդագէտ [initié] և աստուածատեն միտքը յղացող հոգեպաշտ վանքը անփայլ շքուարդ մը դարձած է այն նուիրական գերեզմանին, ուր կեանք մը կը հաւնգի . . . և որուն համեատ տապանաքարին վրայ հայ ուխտաւոր մը Նարեկի արքուն կոնակին սո սիրուն երկտողը պիտի երևակայէր կարգալ :

«Ի սուր չնչոյ թշուառի՝

Առից զհոգիդ քո բարի» :

Մարդկային քշառ շունչի փոխանակութիւնը աստուծային քարի հոգիով . հեծող ու լացող մարդկութեան իզճն ու սփոփանքն է այս, ծլած ու ծաւալած Նարեկացի մը յայտնատես գիտակցութեանը մէջ, որուն խորերէն կը բխի ու կը հնչէ զգնումի արցունքն ու հառաչանքի ձայնը՝ փրկող ու զթացող Աստուծոյ մը վերբնծայում :

Եւ որպէս զի այս վերբնծայումը Ի, դարու հոգեպաշտներու կողմէ ալ կատարուած ըլլայ, գովելի նախաձեռնարկ մը և զաւ Նարեկի հոգին վերարծարեւու Հայուն արդի եղափոխուած լեզուին մէջ, բառ կարելոյն ջանալով պահել այն աւիւնոտ ու խանդոտ շունչը՝ զոր Անձեացիի այս տեսանող զաւակը դրած է իր խաղաղօրէն էութեան անխարդախ պատկերացումը և զող անկաշկանդ և կանոնազանց — եթէ կարելի է այսպէս ըսել — լեզուին մէջ . թերութիւն մը՝ որ բնական է ամէն աշխոյշ համար՝ որոնք արուեստէն վեր՝ վսեմ տեսականի մը ինքնամուտց և բաւարարատոյց գերիններն են :

Քառիմէն վերջ՝ իմաստասիրական մտքով մ'օժտուած մեր յարգելի բանասէր Մրմրեանն է՝ որ ժողովուրդի լեզուով կ'ուզէ խօսեցնել Նարեկացին : Եւ մենք, Ամին . Ս . Պատրիարք Հօր յանձնարարութեամբ իսկ, պատշաճ կը տեսնենք հոս, Տաճարի մէջ ճաշակ մը տալ անոյ՝ ալ թարգմանութենէն, որ՝ իբրեւ երկրորդ փորձ՝ վրասն ենք թէ աւելի հարազատօրէն պիտի ներկայացնէ անզուգական վանականը իր անմահ գործին մէջ, անոր կեանքէն կայծ մը գէթ փոխադրելով Հայ ժողովուրդի գիտակցօրէն բարեպաշտ սրտին և գիտնօրէն հաւատացեալ մտքին մէջ :

Մրմրեան է՞ . գեղեցիկ զաղափարը յը-

դայցած է նաև իր այս թարգմանութիւնը առանձին հրատարակութեամբ մը ի լոյս ընծայելու ու արդիւնքը բարենպաստակ դործի մը յատկացնելու :

Մենք կը սիրենք յուսով թէ պիտի գըտնուէին բարեսէրներ՝ որոնք քաջալերելու համար այսպիսի ազնիւ նպատակ մը և փութացնելու համար անոր իրագործումը՝ նիւթապէս պիտի ուզեն օժանդակել Նարեկի աշխարհաբար երկրորդ քարգնանութեան հրատարակութեան :

ԽՄԲ .

ՍՈՒՏՔ

Կրօնքի, աղօթքի, առաքինութեան, բարեպաշտութեան նուագումի ժամանակամիջոցի մը՝ վերջեւս գեղեցիկ փորձեր մը եղան Նարեկի վրայ նուրբ ուսումնասիրութեանց եւ նախաձեռնարկ քարգնանութեան մը, եւ գտան ակնկալուածէն աւելի ընդունելութիւն :

Քաջալերուած այս քիչ մը ուշ մնացած ձեռնարկներէն, եւ զգալով հոգեպաշտիկ մեր հիմաւուրց տոմարն համար պէտքն աշխարհաբար Նարեկի մը, որ՝ առանց ըստ կարելւոյն կորսնցնելու գրաբար բնագրին խոր ու ծանր ոգին՝ կարենայ նորէն արծարծել կրօնքի, աղօթքի, առաքինութեան ու բարեպաշտութեան՝ մանաւանդ զղջումի ու դարձի փրկարար հուրը ծախիչ, համարձակեցանք աշխարհաբարի մըն ալ մե՛նք վերածել մերովսանն Նարեկացիին այս աստուածախօսութիւնները, որ լծողած են քրիստոնէական սուրբ եւ քաղցր հօգոսութեան՝ վսեմութիւն մը աստուածային :

Ասո՛վ, ասո՛վ, ո՛վ քրիստոնէայ, կրնաս խօսիլ Աստուծոյ հետ ու առնել փրկարար պատասխանդ անոր անհուն ողորմութենէն :

ԹԱՐԳՄԱՆԻԶԸ

ՆԱՐԵԿ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Դրիգորի Վանականի Նարեկայ Վանքին

ՍԻՐՏԵՐՈՒ ԽՈՐԵՐԷՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

ԲԱՆԱ.

Ա. — Ձա՛յնն հառաչանքի սիրտիս հեծութեան՝ ողբերու աղաղակներով՝ կը վերընծայեմ Քեզի, ո՛վ տեսող գաղտնեաց, եւ՝ դնելով սասանած միտքիս իղձերուն ճե՛նձերեալ պտուղն անձա տոչորոզ արտմութեան հուրին վրայ՝ կը մատուցանեմ Քեզի, կ'առաքեմ Քեզի կամքովս՝ իրրեւ բուրվառով, Դո՛ւն ալ պիտի հոսուգտաս, պիտի նայի՛ս անոր, գիտ՜ծ, բազմաբարդ ծուխերու մէջէն մատուցուած բոլորապատեղ պատարագէն աւելի : Ընդունէ՛ յօղուածն այս դոյզն խօսքերուս՝ հաճութեամբ և մի՛ բարկութեամբ : Թող ելնէ՛վե՛ր բանական զոհիս կամաւոր նուէրն այս խորհրդակիր սենեակիս զգացութեանց խորերէն, և հասնի Քեզի չո՛ւտ չո՛ւտ՝ ողջակիզուելով իմ պարարտ ճարպիս դօրութեամբ : Ու երբ այսպէս աղերասխան դատախազեմ Քեզի մեղքերուս համար, ո՛վ Հզօր, թող չերեւիմ սաղակալի՝ նման ամբարշտեալ Իսթայէլացւոց ձեռքերուն համբաւնաւուն, ինչպէս կը բողբէ Յսայի, կամ Բաբելոնի անիրաւութեան, զոր կ'ակնարկէ հօթանաներկեւերորդ Սաղմոսին առակը . այլ ընդունէ՛ Սերովայ խորանին հաճելի խունկին նման . այն խորանին՝ զոր Դաւիթ նորոգ կանգնեց գերութենէ դարձած տապանակին հանգստեան համար, որ եւ պատկեր մըն է կորսուած հոգիիս վերստին գտնուելուն :

Բ. — Բայց հատուցման դատաստանիդ ահաւոր ծայրը, որ կը հնչէ ուժգին վրէժ-ինդրութեան ձորին մէջ, կը յարուցանէ ներսս կրկին պատերազմներ՝ այժմէն իսկ ստուերելով հոն ներհակ յուզումներ եւ շարժումներ, չար ու բարի խորհրդոց հոյլեր, իրրեւ զէնքով եւ սուրով իրարու դէմ բախելով, որով ես գերի կ'ըլլամ

մնեալն հին մարդուն նման՝ մինչ փըրկութեան շնորհդ զեռ հասած չէր . ինչպէս Պօղոս՝ ընարեւազոյն առաքեալն՝ ակնարկելով Մովսէսի՝ այսպէս անոր յազմող կը ցուցնէ Քրիստոսի վրկութիւնը : Վասն զի եթէ մօտաւուտ է օր Տեառն , ըստ Դրոց ըսածին , Յովմանիմախ՝ անձուկ հովիտին եւ Կեղրոնի հեղեղատին մէջ , դատաստանի ժամադրութեանց փոքր հանդիսաւորութեանց համար , որ կը պատկերեն հանդերձեալն այս աշխարհի կենցաղականներով , անպա աւելի եւս մօտեցած է ինծի մարմնացեալ Աստուծոյ արքայութիւնը , որ պիտի գտնէ զիս պատճառ մեծամեծ մեծաներու՝ բարդեալ տոկոսիքով հանդերձ՝ յանդիմանական այլ եւ այլ ճշմարտապատուժ մասերով , այն Եղոմայեցւոց , Փղշապցւոց եւ ուրիշ բարբարոս ազգերու մեղքերէն աւելի մեծ , որոնք հարուածելու համար երբեմն ձեռք վերուցիր հին առեւտները : Անոնց հարուածն ու պատիժը՝ չափուած էին քանի մը տարիներով , իսկ պատուհասն իմ մեղքերուս անսահման կերպով անվերջանալի է : Ա՛հ , գո՛ւր եւ որոգայթ անվախելի , ըստ մարգարէին եւ առակողին , մեծ տաղնապով ահա վրաս հասնելով՝ այս անգէն կ'սկսի մշտնջենաւոր ամօթի յայտնութիւնը : Դո՛ւ միայն կրնաս հրաշագործել այս ամէնուն գեղերը , ո՛վ քաւիչդ մարդկութեան , եւ կը փրկես զիս հոգւոյս վտանգին ամէնավտան տարակոյսներէն , դու՝ որ անսահմանելի բարձրութեան անձառ փառքովն օրհնեալ ու գովեալ ես յաւիտեանս յաւիտենից :

2. — Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

Կ Ա Մ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՈՒՄԸ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ (*)

Մէկ նախեղանով , վեց արարունձով եւ մէկ վերջաբանով .

Գ Ր Ե Ց

ԴԱՐԵԳԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

(Ի Դպրեվանոց)

Յ Ա Ռ Ա Չ Ա Ր Ա Ն

Ներկայացումները , թատերական ո՛ր սեւին ալ պատկանին անանք , խիստ լուրջ եւ կարեւոր դեր մ'ունին ժողովուրդներու նկարագրի կազմութեան եւ բարքերու սղնուացումի գործին մէջ : Անոնք ա՛յնքան աւելի շինիչ , ներշնչող եւ ազդեցիկ կ'ըլլան՝ որքան իրենց ներկայացուցած ժամանակը , դէմքերն ու գէպքերը իրենց անխարդախ , կարկառուն եւ կենդանի գիծերովը պատկերանաւն դասերաբեմին վրայ : Անոնց մէջ արուեստագէտի վրձնի քնայքէն եւ երթակայական թելադրութիւններէն աւելի պէտք է դրուի իրականին հմայքը , տարկայական ճշմարտութիւնը , քննութեան կամ քննադատութեան անաչառ ու աննախապաշար դատաստանովը ստեղծուած : Վաւուրուն երեւակայութեան մը հետ , որով միտքը հզօր թափով մը կը փոխադրուի յետախաղաց անցեալի մը մէջ , զոր կ'ուզէ վերապրեցնել , անոնք կը պահանջեն նաեւ ճշմարտախոյզ արամաբանութեան մը պայծառ լոյսը , սրտի զեղումին հետ մտքի կշռադատութիւնը , որպէս զի պատկերներն ըլլան սրտագրաւ ու հրահանգիչ :

Ոչ ոք կրնայ ուրանալ թէ անցեալը վերապրեցնել դժուարին գործ մ'է , երբ կը պսկսի մանաւանդ պատմութեան լոյսը : Արուեստագէտը պարտաւոր է խիստ խզճա-

(*) Ամեն իրաւունք հեղինակին վերապահուած է :

միտ քննութեամբ մը թափառելու հոն, կարենալ թափանցելու համար իրերու ներքին արժէքին, վերլուծելու և ի վեր հանելու համար անոնց իսկական իմաստը, դգուշութեամբ պատռելով՝ եթէ հարկ է՝ այն մութ քողը, որով յաճախ դարերը ծածկած են մանաւանդ մեր անցեալի պատմական կեանքը: Անցեալով զբաղող թատերերգակ մը առանձնաշնորհուած և պարտաւոր իսկ է արուեստին պահանջած բոլոր նրբութիւններով գեղանկարել ու գրաւիչ ընել իր պատկերները, ճարտարութենէն պատրաստելով իր երանգապնակը և գործածելով իր վրձինը: Բայց որովհետեւ «արուեստին ճշմարիտ առարկան կեանքի արտայայտութիւնն է» և «արուեստը իրականութեան խոսացումն է»,⁽¹⁾ պէտք է զգուշանայ ճշմարտականց արուեստականութեամբ մը անհրապօրե խիստ վերացական դարձնելէ զայն, բռնազբօսիկ կախարդանք մը տալու անօգուտ ճիգը թափելով անոր վրայ: Գեղեցկագիտական և բարոյագիտական մանրամասնութիւնները պէտք չէ վնասն դէմքերու իրականութեան և դէպքերու հաւաստիութեան. ուրիշ խօսքով՝ արուեստի բանաստեղծութիւնը պէտք չէ խեղաթիւրէ պատմութեան հոգեբանութիւնը: Այս է մանաւանդ իմ դաւանանքը պատմական թատերգութիւններու մասին:

Ս. Սահակ Պարբեւ կամ Առչակունեաց Թագաւորութեան քարձումը պատրաստելով երբեք յաւակնութիւն չեմ ունեցած արուեստագիտական գործ մը պատրաստած ըլլալու, վասն զի նախ՝ առիթ չեմ ունեցած մշակելու գրական այդ սեռը և երկրորդ՝ դպրոցական զբաղումներս չէին ներք պահանջուած ժամանակն ու խնամքը տալու անոր. սակայն ջանացած եմ գէթ կարողութեանս և թերի պատմութեան մը ներածին չափով, պատկերները կազմել իրապաշտի մը — ո՛չ խոստատիրական առումով — տկար վրձինով, ո՛չ չափազանց հաւատք ընծայելով միակողմանի դիտող և դատող պատմիչներու վկայութիւններուն,

որոնք ընդհանրապէս եկեղեցական բարեպաշտական զգացումի մը ծնունդ են և ո՛չ ալ արմատական քննադատութեան մը խիղախ եզրակացութիւններուն, որոնք առաջիններուն հակահարուածներն են յաճախ և յառաջագունեան համոզումի մը բնական հետեւանքը:

Այս գործը պատրաստելով՝ երբեակ նպատակ ունեցած եմ նախ՝ պատուել պարթեւ վեհօգի Հայրապետի մը անմահ յիշատակը: Հայրապետի մը, որուն նկարագիրը, որուն կեանքն ու գործունէութիւնը, զորս անկանխակալ քննադատութեամբ մը ջանացած եմ ի հանդէս բերել ներկայ ողբերգութեան մէջ, հերքում մ'են ինքնին կարգ մը նորածին ենթադրութիւններու, երկրորդ՝ Կիլիկիոյ Տ. Տ. Սահակ Բ. Ս. Կաթողիկոսի անունին առիթով հրահանգիչ դաս մը տալ մասնաւորապէս իր հովանաւորութեան տակ գտնուող Կիլիկեան Դեպարտմցի սաներուս — որոնք գոհութեամբ կը յայտարարեմ թէ բաւական յաջող կերպով ներկայացուցին գործը երկու անգամ¹⁾ — և յուսալով փոխանցել անոնց սրտին մէջ վոքրիկ կայծ մը այն սուրբ «Կրակ»էն, զոր Ամենաշնորհ հոգեւոր ծնողս և պատուական ուսուցիչս Դուրեան Տ. Եղիշէ Սրբազան իր մոգական ունեւիով դբած է մեր՝ իր երախտապարտ սաներու հոգիներուն խորը, ինչպէս իրաւամբ յայտարարած էր ինք՝ իր Իզմիրի հօսին. և երրորդ՝ հրատարակութեան տալով զայն՝ գրական ամենադուրյն նուէր մ'ըրած ըլլալ այն բազմաչարչար ազգին՝ որուն երախտաճանաչ զաւակներէն մին եմ եւ՝ ես: Եթէ յաջողած եմ առաջադրած նպատակիս հասնիլ՝ ա՛յդ իսկ է իմ վարձատրութիւնը: Երկու խօսք ալ:

Հայուն ճակատագիրը եղած է կարծես ողբալ, մի՛շտ ողբալ. և դժբախտաբար ն'ս ալ իմ գրական նախախայրիկս կ'ընծայեմ ազգիս այս ողբերգութեամբ, ուր անցեալի մը տխուր պատկերները միայն զբոշմուած

(1) L'art au point de vue sociologique, M. Gugu. էջ 57, 65:

(1) Մին ի նպաստ Դպրանցի մասեմադարանին 1909 Փետ. 1-ին Սահակ Պարբեւի տնին առիթով եւ միւսը Փետ. 6-ին ի նպաստ Սոյ ազգ. վարժարանին:

կան : Բայց միևնույն և զէթ տես-
նել երիտասարդ ինկած թագաւորի մը
մօտ՝ ծերունի թագապաշտպան հայրապետ
մը . դիւանագէտ այլ փառատենջ Վասակի
մը մօտ՝ քաջ և հայրենամուէր Վարդան
մը , շահամու Սուրմակի մը մօտ՝ իրենց կու-
շումին գիտակից եկեղեցականներու խումբ
մը , և ին . և ին : Այս հակադրական պատ-
կերները , զորս մեծ մասամբ յիսնագոյն
թուականներու մէջ , այսինքն Վարդա-
նանց պատերազմի ժամանակին կատար-
ուած իրողութիւններէն դատած ու քա-
ղած եմ , կը սիրեմ յուսալ թէ հրահանգիչ
ին կամ կրնան ըլլալ , մանաւանդ ամէն
անոնց համար՝ որոնք կը հետաքրքրուին
անցեալով :

Իսկ եթէ ողբացի անցեալ փառքի մը ա-
ւերակները՝ թող այդ դատապարտութիւն
մը չբերէ իմ վրայ : Գերութեան ու հա-
րստահարութեան մէջ տառապող ժողովուր-
դի մը զաւակը ուրիշ ինչ պիտի կրնար
ընել , երբ անոր զուարթ բանբերները
կախուած կը մնային լացող ուռիներէն
արիւնաներկ եփրաւի ու այլի Արաքսի ,
որոնց եզերքը նստած՝ Բաբելոն գերեզար-
ուած Իսրայէլացիներուն նման՝ միայն
արցունք պիտի ունենայինք գետերու ա-
րիւնին հետ խառնելու , յիշելով մեր անց-
եալի փառքը , մեր Սիրոնները : Դարձեալ
չէ՞ մի որ արցունքը սիրոյ մարմնացումն է
յաճախ : Արդի՝ ընդհանրապէս մեռած
տարրեր դարձած եկեղեցականներէն մէ-
կուն սիրոյ թանձրացումը թող նկատուի
ողբի այս չիթ մը արցունքը իր դժբախտ
հայրենիքի նկատմամբ , որուն համար փա-
ռաւոր տապալակի մը աղօտ լուսապատկերն
ըլլայ թերեւ 1908 յուլիսեան Օսմանեան
Յեղափոխութիւնը , որ սակայն ստակաւին
իր սողմնային վիճակին մէջ է դժբախտա-
բար և ուսկից շատ ինչ ակնկալելու (1)

(1) Ասանայի բաւեցուցիչ այէթը եւ այսօրուան
աւեհադքախոս ու արգահատելի կացութիւնը մեր
ակնկալութիւններէն դուրս էին բացարձակապէս :
Օսմանեան-Սահմանադրանքիմը արդարասիրութիւնը
պիտի կրնայ վերջապէս մոռցնել իսկ Հայրենիքի
փրկութեան նոխազներուն այս անդամներէն կո-
րուսն ու ցաւը : Յոռեքս չենք ուզեր ըլլալ :

(Ծնթ. Խմբ.)

Իրաւունք ունին Օսմանեան հայրենիքին
հարազատ զաւակներէն և՛ Հայերը :

1 Մայիս 1909

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Սիւ-Մայրավանք

Ա Ն Ձ Ե Ր

Սահակ Պարթեւ,
Արսաւես Գ.,
Սմբատ Բագրատունի,
Վարդան Մամիկոնեան,

Վասակ Սիւնի,

Եղիշէ Ամասունի,

Դիւս Արահեղացի,
Աղան Արծրունի,
Ղեւոնդ,
Սուրմակ Արծկեացի,
Դիւս,

Վարազապուն,

Արսէն,

Շուշան,

Վ. Վամ Ե.,
Վեհմիհրեապուն,

Դրան և ապա մարդպան Հայոց
Սուրեն Պահլաւ,

Պարգեւ,

Հրեհակներ
Հայ զինուորներ
Հայ սիկիւններ
Պարսիկ զինուորներ
Դողթան երգիչը եւ իր որդին :

Կաթողիկոս
Թագաւոր
Ասպետ
Սպարապետ Ե.
Թոռ Սահակի
Նախարար
Սիւնեաց .
Եպիսկոպոս
Ամատունեաց
Վարդապետ
Երէց
Երէց .
Երէց .
Նախարար
Վահուտունեաց
Նախարար
Պալուտեաց
Նախարար Ա-
րեղենից
Դուստր
Վարդանի
Արքայ Պարսից
Պաշտօնեայ
Դրան և ապա մարդպան Հայոց
Հաղարապետ
Պարսից Դրան
Հայ սուրհան-
դակ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՍԱՀԱԿԻ ՏԵՍԻԼԸ

(Վաղարշապատի եկեղեցիին մեջ)

(Լուսավառ ամպեղէն հսկայ բեմ մը, վրան սպիտակափայլ կտուրով ծածկուած խորան մը, որուն ծայրը կը շողշողի բոցաւեցող խաչ կը: Խորանը կը բացուի ու կը տեսնուի շէնդ սեղան մը, վրան սրբագործուած հաց մը եւ խաղողի ողկոյզ մը, ու ատենց մօտ պղծաբան վարսաւոր ձիթենի մը: Բեմին ձախակողմը բուխ կեւով պատուած արքա մը, որուն վրայ դրուած է արծաթեայ սկուտեղ մը եւ ատուր մէջ ծալուած նախորհ մը, ինչպէս նաեւ ոսկեզունդ մը եւ մագաղաթ մը: Մագաղաթին վրայ գրուած կը տեսնուին նախ ոսկեզունդ, յետոյ կիսաչիմը եւ ապա կարմրագոյն տղերով տառեր: Աթոռին շուրջը բոլորուած են թեւաւոր մանուկներ, որոնք արքանով միասին կը թռչին սեղանին վրայ՝ որ կը ծածկուի բեմին աջակողմը՝ գրակալի մը առջեւ կանգնած Սահակի աչեւերէն: Սահակ, սարկաւազի տարազով, յուսակոյտայ երեսի վրայ կ'իյնայ հրեշտակի անակրկն կերպով: Հրեշտակը մօտենալով կը բռնէ անոր ձեռքէն ու վեր կը վերցնէ զանի ըսելով):

Հրեշտակ

Քաջաւերուէ՛ ու զօրացի՛ր, Սահակ. Հայոց Աստուծոյ ապաղայի մեծ խորհուրդի մը քօղը բացաւ քու աչքերուդ առջեւ...

Ինչո՞ւ այդպէս արտուած ես եւ մի՞նչ մը տածուեցիր կը պղտորեն քու յատակ միտքդ: Դիտեմ, թերեւս արու գաւառի չուշնհաւդ շինծ վիշտ ու մտաւանջութիւն կը պատճառէ քեզ. բայց մի՞թէ անծանօթ է քեզ կամքը Հզօրին՝ որ գիտէ իւրաքանչիւրին բաշխել արժանի չնորհը:

Տե՛ս, Աստուծոյ քու վրդովդ փարատելու եւ զքեզ միթիթարելու համար այդ տեսիլքով քեզ յայտնեց գաղտնիք մը խորհրդաւոր պատկերներու երեւոյթով, որոնց մեկնութիւնը առիւթ պաշտօնը ի՞նչ յանձնեցաւ Բարձրեային կողմէ:

Լսէ՛ ուրիմն:

Լուսաշող բեմը, զոր տեսար, ճշմարիտ հաստատելի պատկերն է: Խորանին սպիտակափայլ կտուրով ծածկուած ըլլալը՝ աստուածային գիտութեան սրբանուէր ոխորհուրդի ծածուկ հանգամանքը կը յատ-

կանչէ. իսկ խաչը, ինչպէս գլխուսդ խորհրդանշանն է փրկագործութեան: Սեղանին վրայ դրուած հացն ու ողկոյզը՝ օրինակ են չարչարուած Յիսուսի մարմնին եւ արիւնին: Վարսաւոր ու պղծաբան ձիթենին նշանակէ աստուածային ողորմութեան եւ մարդոց մէջ հաստատուած սիրոյն՝ որ կեանքը կը պողաքերէ: Զիթենիին ճիւղերուն վրայ թաւաւած ու չորցած պտուղները՝ սիրոյ եւ արդարութեան բարձունք, ատելութեան ու կեղծաւորութեան աճումն ու տիրապետութիւնը կը պատկերացնեն: Զախակողմեան աթոռը օրինակ է քահանայապետական եւ թագաւորական իշխանութեան. իսկ արծաթեայ սկուտեղը՝ աստուածային Բանին: Նախորար քահանայապետութեան, ոսկեզունդը թագաւորութեան եւ աթոռը ծածկող թուխ կտուրը Հայոց աշխարհին ալեկոծեալ ու տխուր վիճակին խորհրդանշաններն են: Տեսար որ Նախորար ոչ ոք վրան չէր առած եւ ոսկեզունդը ոչ ոք ձեռքը չէր բռնած. այդ կը նշանակէ թէ քիչ ժամանակէն Լուսաւորչի տան քահանայապետութիւնը պիտի վերջանայ եւ Արշակունեաց թագաւորութիւնը պիտի բարձուի...

Սահակ

(Յուզուած ծուկի կուգայ եւ ձեռնամաճ)

Աստուծոյ իմ...

Հրեշտակ

Մի՛ յուսահատիր սակայն, Սահակ: Աթոռին շուրջը բոլորուող մանուկներով Աստուծոյ ուղեց քեզ իմացնել թէ քու սերունդէդ ընտիր ու քաջարի զիւցաղներ պիտի ընծիւղին, որոնք նահատակութեամբ պիտի սրբագործեն Լուսաւորչի տան աշունքը եւ Հայոց աշխարհը: Պիտի դանաւին նաեւ յիստեր, այո՛, նախարարական պաշտօնէն մանաւանդ, որոնք անխիղճ գաւառ գիրները պիտի ըլլան Հայրենիքին ու եկեղեցիին: Սակայն մարտիրոսներու արիւնը պիտի փրկէ Հայրենիքը:

Քեզմէ վերջ քու աթոռիդ պիտի տիրանան եպիսկոպոսներ, որոնք իրենց կոչումն անպիտակից, փառասանչ ու շահադէտ, պիտի սրբապղծեն քահանայապետա-

կան նուիրական պաշտօնը . բայց անոնց անունները պիտի ջնջուին երկնքի դպրութենէն , ինչպէս ցոյց կուտային մազալաթի ջնջուած տողերը : Հայոց Առտուածը , սակայն , միայն սեւ գոյնով դրոշմած չէ Հայաստանի ճակատագիրը : Դադարեալ թաղաւորութիւնը կրկին պիտի յառնէ իր ածիւններէն և քահանայապետական աթոռը պիտի վերանորոգուի Ս Գրիգորի սերունդէն : Մազալաթի կարմրագիր տողերը այս իրողութեան մարգարէական իրողութիւններ են :

Օ՛ն , արիացի՛ր , Մահակ , ու պատրաստուէ կատարելու՝ յօժարակամ նուիրումով՝ ինչ որ Հայոց Առտուածը կը դնէ քու վրայ իբրեւ սրբազան պարստկանութիւն :

Քե՛զ վիճակուած է Գրիգորի սկսած գործը ամբողջացնել :

(Հրեասկը կ'անհերքեալանայ)

Սահակ

(Քիչ մը քաջալերուած ոսփի կ'ելլէ եւ պահ չը լուռ մնալէ վերջ .)

Ի՛նձ վիճակուած է Գրիգորի սկսած գործը ամբողջացնել . . . Կամք Տեառն օրհնեալ եղիցի . . .

(Վարագոյրը կ'իջնէ :)

ՎԵՐՋ ՆԱԽԵՐԳԱՆՔԻՆ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

ՏԵՍԻԼ Ա.

(ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՄԱՆԻՆ ՄԷՋ)

Սահակ

(Կաթողիկոս . Կաթողիկոսարանի սրահի մէկ անկիւնը բազմոցին ծայրը նստած՝ քախմաղէմ ու մթախոն՝ կը մեմախօսէ . երբեմն ընկնուած եւ երբեմն զայրացիոս :)

Չէ՛ , չէ՛ . անոնք բոլորովին անիրաւ չեն : Անոնց ամբաստանութիւնները , թէեւ չաբաւասութեամբ չափազանցուած , բայց քաճակապէս անհիմն չեն : Նա իր փափուկ ու բարձր պաշտօնին գիտակցութիւնը չունի բնաւ : Իր հակաքրիստոնէական վառուէր կեանքովը՝ ուսկից հասարակ քաղաքացի մ'անդամ պիտի խորչէր , նա անարժան է

արդարեւ արքայական թագին , երբ մահաւանդ անոր վրայ բարդենք ժողովուրդ մը իմաստութեամբ և հեղինակութեամբ կառավարելու համար անհրաժեշտ եղող վարչական ձիրքի պակասը երեսասարդ . Արշալուսիին մօտ : Հայը շատ բան տուած է իր քանի մը տարուան իշխանութեամբ և ահա իր շնորհիւ մեծ հաջողութիւն ալ կը պատրաստուի . . .

(Պահ մը լռելէ վերջ .)

Ողջմտութիւն է , սակայն , յանուն կրօնքի և բարոյականի , կամ նոյն իսկ յանուն ազգային նախանձախնդրութեան ամբաստանուած մէկը թշնամի , այլակրօն և անբարոյական ազգի մը դատարանին առջև հանել . . .

(Ոսփի ելլելով եւ վրդոված)

Ա՛հ , այս որոշումը զիս կ'ահաբեկէ . . .

(Սրահին մէջ երբեւեկ մ'ընկելով եւ յետոյ կրկին նստելով՝ կը շարունակէ մեղմիւ .)

Բայց . . . ի՛նչ օգուտ . . . Արտաշէս , անհեռաւան , դեռ տեղի չտուաւ ո՛չ մէկ յորդորի և սպառնալիքի առջև : Հօրս պապուն , կամ նոյն իսկ հօրս ընթացքը չեմ ուզեր բռնել պարտին հանդէպ , այնպիսի ժամանակի մը մէջ , ուր նախարարները արդէն թշնամական լարուածքով մը զինուած ըլլալով անոր դէմ՝ իմ ու պալատին միջև յարաբերութեան խզում մը և զգտութեան ծաղիկ մը կրնան խիստ վնասակար պոռթկում մը յառաջ բերել . . .

(Ոսփի ելլելով , երբեւեկելով եւ ընկնուած .)

Պարսից արքունի՛քը պիտի քակէ կնճռոտ հանգոյցը . . . Ահա՛ սոսկալի կացութիւնը՝ ուր կը գտնուի այսօր Հայոց աշխարհը . . .

Իսկ իմ մտքիս առջև կը ցցուին երկու վրդովիչ պատկերներ . Աւեսարան եւ Դաւ . . . Կամ պէտք է ներող աչքով դիտել Արտաշէսի յոռի ու անառակ կեանքը և աւետարանի դէմ գործել , կամ համաձայնիլ նախարարներուն հետ՝ և ազգային սրժանապատուութեան դէմ մեղանշել : Կրօնական խիղճը թէ՛ ազգային ողին . . . Այո՛ , թէեւ կրօնի պաշտօնեայ՝ բայց իբրեւ հոգեւոր գլուխ ազգի մը՝ այդ ազգին ամբողջութիւնը պահպանելու կոչումն ունիմ :

իմ անձիս մէջ պէտք է միտւորուած գործէն կրօնքի ներդրամիս ոգին և ազգային նախանձախնդրութեան ոգին : Եկեղեցիս ազգիս համար՝ աղօս եկեղեցիս համար, ա՛յս է ահա ու պիտի ըլլայ իմ կոչումս անխախտ սկզբունքը՝ որուն շուրջ պիտի դառնան իմ ու իմ յաջորդներուն բովանդակ կեանք ու գործունէութիւնը : Ազգ ու եկեղեցի փոխադարձ պարտականութիւններ ունին իրարու հանդէպ, որոնք հաւասարապէս նուիրական են ու հրամայական : Արտաշէս ներկայացուցին է ազգին՝ պետութեան, որ եկեղեցիս կը վերաբերի, եւ ներկայացուցին է եկեղեցիս՝ որ ազգիս՝ պետութեան կը պատկանի : Արտաշէս ու եւ փոխադարձաբար տէր ենք իրարու և խնամատար : Ի՞նչպէս ուրեմն կրնամ իմ խնամատարի պաշտօնս որբապղծել դաւադրութեամբ մը՝ որ ամբողջ ազգին ճակատագրին հետ խաղաղութնով ունի : Արտաշէս մոլորած է, լա՛ւ : Իմ միակ պարտականութիւնս է զանի դարձի բերելու աշխատիլ ամէն հնարաւոր միջոցներով և ոչ թէ յօշոտող զայլին մագիլներուն յանձնել զայն :

(Չալացիկն ձեռքի Եւրոպայով մը)

Ա՛յս է, ահա, նախարարներուն մահա՛ւ չափ սխալը՝ զոր քանիցս մասնանշեցի : Բայց ի զո՛ւր. անոնք դաւաճաններ են ազգին ու եկեղեցիին . . .

(Բազմոցին անկիւնը կը նստի եւ ձեռքը հակիկն ցանկով՝ յուզուած շեշտով.)

Տիգրան . . . Հայոց թագաւորը ամբաստանուած արքայից արքային առջեւ . . .

(Գլխու ժխական եւ ջղայնօտ ցնցումով մը)

Անկարելի՛ բան, ա՛հ, անհնար է այդ : Եւ չե՛մ կրնար դաւաճանել :

(Ընդունալով nsfի ելելով.)

Ո՛հ, ո՛հ . . .

ՏԵՍԻՒԼ Բ.

ՍԱՀԱԿ ԵՒ ՎԱՐԴԱՆ

Սահակ

(Կը Եւրոպայէ իր երթելէր՝ անհանգիստ)

Վարդան

(Ներս կը մտնէ պաշտօնատնով եւ Սահակի աջը հանքուրելով)

Ի՞նչ ունիք դարձեալ, իմ պապ : Մտա-

նանջ վիճակի մը մէջ կը տեսնեմ զձեզ : Մըք պիտի անհետանան ձեր ճակտին այդ կնճիւղները՝ որոնք ա՛յնքան սրտազրաւ լեզուով մը մեզ կը պատմեն ձեր հոգիին խռովքներն ու յուզումները :

Սահակ

Մահուան սառնութիւնը միայն պիտի կրնայ հարթել այդ կնճիւղները, ի՛մս Վարդան . . .

(Պահ մը Եւրոպայէ վերջ իր երթելէր, երբ Վարդան արձանացած՝ կը դիտէ իր պապուն խռովայնով վիճակը.)

Ի՞նչպէս են տունէն :

Վարդան

Մամիկոնեան տունը հանգիստ չի կրնար ըլլալ, իմ պապ, երբ իր ծերունի նահապետը լուշջ և իրաւացի պատճառներ ունի իր կեանքը հալ ու մաշի մէջ անցունելու : Ձեր հոգին մեր ընտանեկան կեանքի հայելին է. եթէ խռովք կայ հոն՝ գիտցէք որ փոթորիկ կայ մեր տան մէջ : Մեր երջանկութեան հորիզոնը ձեր անամպ ու անվրդով սրտին խորն է միայն. վառն զի հայրենիքի պատկերն է այն . . .

(Ողորմական շեշտով.) Կ'աղաչեմ, իմ պապ, քիչ մը զուարթ եղէք : Ձեր ալեղարդ կեանքը խիստ թանկագին է մեզ և բովանդակ հայ ազգին համար :

Սահակ

Ապրի՛ս, հոգիս, իմ միակ միտքարութիւնս : Բայց իմ կեանքս այլեւս իր մայրամուտին մօտեցած՝ ձեր կեանքի արեւով պիտի չողջողայ : Ես՝ իբրեւ պարտականութիւն՝ իմ կեանքս զոհեցի ազգիս ու եկեղեցիին. բայց անկողի բաւական չէ : Կ'ուզեմ որ ձե՛րն ալ այդ նուիրուած կեանքին շարունակուի : Թիւնն ըլլայ : Կեանքի արժէքը նուիրումն մէջն է արդէն սիրելիս :

Ես ուրախ եմ որ Լուսաւորչի վերջին շառաւիղը Մամիկոնեան ջինջ արիւնին մէջ կը գտնէ իր վերկենցաղումը : Մամիկոնեան տունը ծաղիկ մ'է՛ նոր փթթած՝ Լուսաւորչի նահատակ արիւնին երկներանդ ու թեամբ . . .

(Պահ մը լուռ մնալէ վերջ կանգ առնելով.)

Մայրիկ ըսի՝ ու Շուշանն միտքս ինկաւ .
Ինչպէս է Շուշանն , քանի որ է ի վեր տե-
սած չեմ զինքը , իմ անուշիկ ծաղիկս :

Վարդան

Լեզուանի ծաղիկը , վարդը , զոր ու-
ղեցիք Շուշանի մը վերածել ձեր ձիւնա-
սալիսակ գլխուն նման : Յ՛, չէ՛ք գիտեր
թէ ո՛րքան սրամտութեամբ կը կրկնէ միշտ
ձեր սորվեցուցած խօսքերը :

Սահակ

Ինչ խօսքեր :

Վարդան

«Ես հայրենիքիս Շուշանը պիտի բլամ .
չեմ ուզեր որ այդպէս բլամ . հայրապետ
պատկիս ա՛յդպէս պատուիրեց ինձ» : Ու
երբ կը հարցնեմ թէ ո՞րն է քո հայրենիքդ՝
կը պատասխանէ , « Հայաստան » : Եւ տա-
կաւին ասոնց նման խօսքեր , որոնք ո՛րքան
անմեղ ու անգիտակից՝ ա՛յնքան ալ յուզիչ
ու բերկրաւոր ինքն :

Սահակ

Այո՛ , այո՛ . սարբի՛ Վարդանիս Շուշանը ,
որ իր մանկական ծաղիկ հասակին մէջն
իսկ կը պատրաստուի հայրենիքի շուշանն
բլամու . մինչ անդին ուրիշներ խայթող
փուշեր կ'ըլլան եւ հայրենիքի կողին կը
խրին՝ մահացու թոյնը ներարկելով անոր
մարմինն մէջ . . . ա՛խ , ա՛խ . . .

(Կր նսի բազմոցին վրայ Վարդանի) .

Նստի՛ր , Վարդան :

(Վարդան կը նսի աթոռի մը վրայ) .

Նոր լուբեր ունի՞ս :

Վարդան

Ինչ լուբ , իմ պապ :

Սահակ

Արտաշէսի եւ նախորդներու մասին :

Վարդան

Ա՛խ , պապ . Արտաշէսի խօսքը մ'ընէք
ինձ . Արշակունեաց տան այդ աղտոտ վէրքը
բացուած Հայ ազգին կողին վրայ : Անիծեա՛լ
բլամ այն օրը՝ ուր այսպիսի թոյլ , զեղի
ու կնամարդի երիտասարդ մը կը բաղմբէ
Հայուն զա՛նին վրայ . . .

(շարունակելի)

ՀԱՒԱՏՔԻ ՅՈՒՔԵՐ

Ինչպէս կարելի է ապրիլ խաղաղիկ ,
երբ չենք գիտեր թէ ո՞ւր կ'ըլլանք
կամ ո՞ւր կ'երթանք , թէ ինչ պէտք է
ընենք այս աշխարհի մէջ , երբ ամէն բան
առեղծուած է , խորհուրդ , եւ առարկայ
տարակոյսի ու տագնապի : Այս անգիտու-
թեան մէջ տարբեր անհասար է եւ հակա-
սական : Հաւաստ պէտք է :

ԺՈՒՅՐՈՒԱ . Իմաստասիրական Խոյկ ԼՈՆԵՐ .

Կրօնի ամենէն մեծ բարեբարութիւնն է
մեզ փրկել տարակոյսէն եւ անստուգու-
թենէն , որոնք մարդկային մտքի մեծա-
զոյն տանջանքը եւ կեանքի թոյնն են :

ՄԷՆ ՏԸ ՊԻՐԱՆ , Մշտմունք , էջ 333 .

Սիրելի բարեկամ , ո՛րքան դժբախտ
ենք խեղճ փիլիսոփաներ բլամէն , որոնց
համար գոյութեան երկարաձգումը յոյս
մըն է եւեթ , եռանդուն իղձ մը , անդուտ
մաղթանք մը : Պիտի ուղէի ունենալ մօրս
առաքինութիւններն ու հաւաստ :

ՍԱՆՔԱ ՐՕՋԱ ,

Նամակներ առ Պ. Վիկտոր Բուզէն .

Նոյն իսկ կը ցաւիմ իմ վրաս , որ վառ-
նեցի ժամանակս , սկարացուցի ուժեղա՛
ի բաց վտարեցի բնական մտքորոշիւնս ,
եւ իմ մէջս սպաննեցի հաւաստն ու սէրը :

ԺՕՐԺ ՖԱՐՍԻ

Կարելի չէ ո՛ր եւ է տարակոյս ունենալ
հոգւոյ անմահութեան վրայ , Զանացի տա-
րակուսիլ , բայց խորհրդածութիւնը ցոյց
տուաւ սխալս :

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ

Շատ անգամ տարակոյսի խաւարը պա-
տեց սիրտս , եւ իմ զգացած անձկութեանս
մէջ , Աստուած իմ , դուն գիտես , թէ
գնտուցի հաւաստի լոյսը :

ՇԻԼԼԵՐ ,

Յուլիոսի նամակներն առ Ռաֆայէլ .

« . . . Ո՛վ Յիսուսի Քրիստոսի աշակերտ-
ները , միացէք Պապոսին , Տէր Յիսուսի
նախակարգապետին , ինձ կրկնելու համար ,
յանուն Աւետարանի եւ փիլիսոփայութեան ,
թէ ժամանակն է հրաժարելու ամէն ան-
ցաւոր բանէ , եւ թէ միակ մտածումը՝ որ

այսուհետեւ ներկի ըլլայ ինձ, քանի մը
օգտակար աշխատութիւններու, Պարտա-
կանութեան և Աստուծոյ մտածումն է:

Վ. ՔՈՒՋԷՆ

Մենք փրկաստիաններս կ'նստորդենք ըստ
լախտի, ենթակայ մարման ու նաւարե-
կութեան: Իմաստասիրութիւնը հետախու-
զութեան ճամբայ մըն է, յանդուգն, վը-
տանգաւոր, ի ինդիր անձանքին, ի
ինդիր անսահմանին, բայց որուն մէջ չենք
գիտեր շատ անգամ թէ ո՛ւր պէտք է
նետել խաբիսիւր եւ ցամաք ելնել...:
Դուք, հաւատացեալներդ, ունիք երկրի
ուղեցոյցը, քարտէսը, աստղերը, ղեկա-
վարը, նաւահանգիստը:

Վ. ՔՈՒՋԷՆ

Տանդէ, իր անմահ քերթուածին մէջ,
Վիրգիլիոսի նման ելած է մինչեւ Երկնա-
յին Լուսոյ սեմը, բայց առանց անկէ ան-
գին երթալու, եւ երբ Աստուածարանու-
թիւնը, այսինքն Հաւատքի գիտութիւնը,
սկսաւ երեւիլ « Խաղաղութեան նշանակ-
ձիթենիով պատկուած, իր կենդանի բոյսի
մը գոյն ունեցող պայծառափայլ շրջա-
զգեատով », Վիրգիլիոսի նման ալ անհե-
տացաւ, պահուրդեցաւ. մտքի այս դարձի-
սը կարծես անոր համար շինուած չէր...:

ԳԵՐՊ. ՊՕՆԱՐՏ

Թարգմ. ՅԻՐԱՅՅ ՎՐԴ.Պ.

«ՏԱՃԱՐ»Ի ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Անխառն երջանկութիւնը սրտի կատար-
եալ գոհունակութիւնն է լաւագոյն գործի
մը կատարումէն յետոյ: Կեանքի վայելք-
ները՝ պարկեշտութեամբ հանդերձ՝ կարե-
ւոր ոյժեր կրնան ըլլալ կեանքը բար-
գաւածող ու ներգաշնակող: Մտքի վա-
յելքները աւելի գերակշռութեամբ կրնան
գործեն մեր հոգիին վրայ՝ որ անսահման
երանութեան մը ոլորանելուն մէջ կը սո-
ւառնի զուարթ ու ցնծուն: Ընտիր ու
վսեմ գաղափարի մը ծնունդը մարդկային
խմայականութեան մէջ՝ կեանքի յաւիտե-

նականութեան վայրկեանական մէկ ժպտան
է կարծես: Իւրաքանչիւր գաղափար կեանքի
նոր յայտնութիւն մ'է արդէն: Բայց
ինչպէս կան կեանքի վիժումներ՝ նոյնպէս
ալ կան գաղափարի վիժումներ, սա տար-
բերութեամբ միայն որ գաղափարի վի-
ժումները վնասակար են ոչ միայն զանոնք
ծնող մտքերուն՝ այլ նաեւ ամբողջ մարդ-
կային ընկերութեան: Աւելի լաւ է ունե-
նալ ամուլ գլուխ մը եւ անհատապէս տու-
ժել միայն, քան վիժածածին միտք մը եւ
հանրութեան չորիք պատճառել: Առողջ
ու կենսալից գաղափարի մը ծնունդ տող՝
ընկերութեան բարոյական դրամագլուխը՝
հետեւաբար եւ վարկը աւելցնել կը նշանա-
կէ: Այսպիսի ծնողութիւն մը ամէնէն ան-
փոխարինելի երջանկութիւնն է ճշմարիտ
մարդուն համար:

Կեանքը առանց անցեալի և ապառնիի,
այսինքն անբիծ ու հրահանգիչ յիշատակ-
ներու և անպղտոր ու զօրեղանքոյ յոյսե-
րու՝ անթափանցելի խաւար մը պիտի ըլ-
լար, ուր տեղոյն հողին ձանձրոյթը պիտի
կոչէր իրեն հայր եւ մեղկութիւնը մայր:
Սակայն անցեալին ու ապառնիին չինիչ զօ-
րութեան գաղտնիքը պէտք է փնտռել
մտքին, Բանին (raison) և կամքին մէջ,
որոնց գաղափարական կատարելութիւնը
կը կազմէ յատկանշանական իմաստն ու
արձրութիւնը գերագոյն և արարչագործ
Սկիզբին: Խորհիլ, արամարսնել ու կա-
մենալ, ասոնք են երջանիկ լրումը մարդ-
կային ճշմարիտ կեանքերուն. լրում մը,
որուն երեք մեծ եղբիւրն են անցեալը,
ներկան և ապառնին:

Գ. ՎԱՐԴ-ԽԱՅ

«ՏԱՃԱՐ»-ի
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դուրս
Գաւառաց » »	40 »
Արտասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Զեռէ կը ծախուի պրակը	50 փարայ

«Տաճար»-ի վերաբերեալ վա չափան գործերու համար պէժք է դիմել
Գ.ՆՈՐԴ Զ. Ա. ԴՈՒՐԵՍԱՆ Ի

Իսկ խմբագրական գործերու համար պէժք է դիմել խմբագրապետ
ԴԱՐԵՂԻՆ Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ Ի